



Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

276

14 MAY 2010

Ն. ԲՈՅՎԱԶԵ, Կ. ԲՈՒՐՋԱՆԱԶԵ

# ԲՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԱՅԽԵՑԵՔԻ ԴԻՔ ։ I ԽՄԲԱԿԻ ՀՅՄԵՐ

Պրացերենից թարգմանեցին

ԱՐՏ. ՅԵՎ ՀՈՎՀ. ԴԱՎԹՅԱՆՆԵՐ

Գ. Ռ Ս Ս Ս Ն Ի  
Պ Ե Տ Հ Ր Ա Տ

Թ Ի Ֆ Լ Ի Ւ  
1 9 3 2

ՈՒՍ. - ՄՈՆԿԱՎԱՐԺ.  
Ս Ե Կ Տ Ա Բ

5(075)  
F-89

06 MAR 2013

5(075)

G-89

Ն. ԲՈՅՎԱԶԵ, Կ. ԲՈՒՐՋԱՆԱԶԵ

20 MAY 2005

# ԲՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԱՅԻԱՆՆԵՐԻ ԳԻՐՔ Ի ԽՄԲԱԿԻ ՀԱՄԱՐ

#### Ե. ՎԱՍԻԼԵՎԻ ԽՐԵԿՈՒՅԹՆԻՐ

$$\frac{1006}{29623}$$

05-985

1. r w g b r b G h g p w r q u w G b g h G  
L P S. j b q z o v z. q u v o g u n n h p

¶ P U S H E  
¶ b s z p u s

9 b s 2 p u s

153. ՀԱՅՐԱԿԻ ԿՐՈՆ  
ՊԱԾ. Տ. Բ. ՑԱՀԱՐԵ

2012 - COPA

Н. А. Масников  
Санкт-Петербург

Թ Ա Յ Լ Ի Ւ  
**1932**

1932

ՈՒՍ. - ՄԱՆԿԱՎԱՐԺ.

Արքագլեց և թողարկեց՝ Գ. Բաբուրյան

## ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

### ՍՏՈՒԳԵՑԵՔ

Ամառվա ընթացքում յերեխաներից շատերը մոռանում են մաքրապահության կանոնները և դպրոց են գալիս կեղտոտ:

Այս բանին պետք է մեծ ուշադրություն դարձնել:

Ընտրեցեք սանիտարական բրիգադ. նա կսուզի ընկերների մաքրությունը և միջոցներ ձեռք կառնի կեղտոտ ընկերներին ուղղելու համար:

Ընկերների մաքրապահության ստուգատեսը պետք է յերկու որը մի անգամ կատար կերպել:

Հանձնաւարություն՝ 1. Ընտրեցեք սանիտարական բրիգադ և պարտավորեցրեք նրան, վոր ընկերների մաքրությանը հետևի և ստուզի:

2. Պարտավորեցրեք բրիգադին, վոր տասն որը մի անգամ զեկուցի ընկերների մաքրապահության մասին:

### ՊԱՀՊԱՆԵՆՔ ԴՊՐՈՑԻ ՄԱՔՐՈՒԹՅՈՒՆԸ

Մենք որվա կեսը անց ենք կացնում դպրոցում. յեթե դպրոցում մաքրապահությանը չհետևենք ու չպահպանենք, որանով կփառենք մեր առողջությանը, այս պատճառով ամեն մի աշակերտ պետք է հոգա դպրոցի մաքրության

մասին, սենյակը չպետք է կեղտոտի, հատակին թքի և այլն:

Աղք լցնելու համար դասարանում պետք է ունենալ աղբաման:

Սանիտարական բրիգադը պետք է հետեւի խմբակի և դպրոցի մաքրության:

Բրիգադը հաճախակի պետք է զեկուցե խմբակին իր տարած աշխատանքների մասին:

Հանձնարարություն՝ 1. Ամենքդ ժամանեցեք խմբակի և դպրոցի մաքրության մասին:

2. Բրիգադը թող գրե պլակատներ մաքրապահության մասին և փակցնե դասարանի պատերին:

## Զ Մ Ո Թ Ա Ն Ա Ն Ք

Մի քանի յերեխաներ պարապմունքի ժամանակ մեջքը ծռում, կուրծքը նստարանին հենած են նստում։ Այս բանը սաստիկ վնասում է առողջությանը. թոքերը չեն կարողանում ազատ զարգանալ, և վողնաշարը ծռվում է։

Պարապմունքի ժամանակ պետք է նստենք ուղիղ, կրծքով չպետք է հենվենք սեղանին։

Պետք է հիշենք նաև, վոր յերեկոյան մթնելու ժամանակ չի կարելի գրել-կարդալ։

Կարգալ չի կարելի նաև պառկած։ Սա թուլացնում է տեսողությունը։


Հանձնարարություն՝ Արտագրեցեք տետրում այն կանոնները, վորոնք պետք է պահպանվեն պարապմունքի ընթացքում։

**Պարապմունքի ժամանակ ուղիղ նստեցեք**

**Պառկած ժամանակ գիրք չկարդաք**



Նկ. 1. Այսպիս չպետք է նստել.



Նկ. 2. Այսպէս պետք է նստել.

## ՈՒԾԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԴԱՐՁՐԵՎ

Բոլոր յերեխաները միատեսակ լսողություն և տեսողություն չունեն։

Մի քանիսի տեսողությունն է թույլ, մի քանիսի լսողությունը. այս պատճառով յերբ խմբակում տեղերը բաժանում ենք, պետք է պարզենք միմյանց տեսողությունն ու լսողությունը։

Թույլ լսողություն ունեցողներն ու կարճատեսները պետք է ավելի տուած նստեն։

## ՍՏՈՒԳԵՑԵՎ ԸՆԿԵՐՆԵՐԻ ԼՍՈՂՈՒԹՅՈՒՆԸ

1. Ընտրեցեք մի ընկեր ձեր լսողությունն ստուգելու համար։

2. Այս ընկերոջից մի մետք հեռու կանգնեցեք. ընկերը ցած ձախով բառեր կարտասանե. ով դժվար է լսում բառերը, կնշանակե թույլ լսողություն ունի։  
Այսպիսի ընկերոջը առաջ նստեցրեք։

## ՍՏՈՒԳԵՑԵՔ ՏԵՍՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Գրատախտակի վրա գրեցեք տառեր:
  2. Միևնույն հեռավորությունից կարդացեք այդ տառերը. ով կդժվարանա կարդալ տառերը, ուրեմն նա լավ չի տեսնում—կարձատես եւ:
- Այսպիսի ընկերոջը պետք է առաջ նստեցնել:

## ՀՈԳԱՆՔ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Մարդը պետք է առողջ լինի, վոր կարողանա աշխատել:

Առողջ կլինենք այն ժամանակ, յերբ կզիտենանք, թե ինչպես պետք է խնամենք մեզ և թե ինչպես պետք է ոգտվենք արեից, ջրից և ողից:

Առողջության համար մեծ նշանակություն ունի մաքրությունը:

Ուստի պետք է աշխատենք մաքրություն պահպանել միշտ և ամեն տեղ:

## ԳԵՏԻ ԶՈՒԲԸ ԽՄԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՊԵՏՔ Ե

Մաքուր ջուրը մեզ համար մեծ նշանակություն ունի, ուստի պետք է զիտենանք, թե վճռ ջուրն է ոգտակար խմելու համար և վորը՝ վոչ:

Գետի և առվի ջուրը խմելու համար անպետք է և անոգտակար:

Գետի մեջ մարդիկ լողանում են, անասուններ են մտնում:

Գետակների մեջ թափում է անձրիխ ջուրը, իր հետքերելով մեծ քանակությամբ աղբ:

Շատերը գետափին լվացք են անում, վորի կեղտու ջուրը խառնվում է գետի ջրին:

Պատահում ե, վոր հիվանդի շորեր են լվանում:

Գետի մեջ են թափում նաև աղբ ու զիրիլ։  
Գետի ջուրը կեղտու ե, և մարդը կարող է շատ հեշտությամբ հիվանդանալ։  
Գետի ջուրը կարելի յե խմելու համար գործածել յեկի տալուց հետո միայն։  
Յեփած ջուրն այլ ևս վասակար չե։

Գետի ջուրն առանց յեկելու չխմեք. նա հիվանդություններ ե առաջացնում

## ԻՆՉՊԻՍԻ ԶՈՒԲԸ ԳՈՐԾԱԾԵՆՔ ԽՄԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Խմելու համար լավ է աղբյուրի ջուրը։  
Նա գետնի խորքերիցն է գալիս, վրա համար ել մաքուր է։  
Խմելու համար կարելի յե գործածել նաև ջրհորի ջուրը. միայն ջրհորը մաքուր պետք է պահենք։ Այն ամանը, վորով ջրհորից ջուր ենք հանում, հողի վրա չպետք ե դնենք, վոր ջրհոր իջեցնելու ժամանակ նա իր հետ կեղտ չտանի։

Ջրհորը մաքուր պահեցեք

## ՉՄՈՌԱՆԱՆՔ

Հիշեցեք, թե որվա ընթացքում քանի տեսակ կեղտու իրերի յենք ձեռք տալիս և ինչքան կեղտ է հավաքվում մեր ձեռների վրա։

Սրա համար անհրաժեշտ է, վոր ձեռները հաճախ լվանանք, մանավանդ ուտելուց առաջ։

Ամեն որ ոճառով պետք է լվանանք մեր ձեռները, յերեսը, վիզը և ականջները։ Ուտելուց հետո պետք է խորանակով մաքրենք մեր ատամները, վորպեսզի սրանց

արանքներում կերակրի մնացորդներ չմնան, չփտեն ու  
ատամներին չվնասեն:

Բացի սրանից, մարմինը թարմ ու գիմացկուն դարձ-  
նելու համար հարկավոր է թաց շորով տրորել: Այս բանը  
պետք է կատարել ամեն առավոտ և յերեկո:

Հանձնարարություն՝ Ոգտվեցեք վերև թված խորհուրդներից, վոր  
պահպանեք ձեր առողջությունը:



Նկ. 3. Յերեխան մինչև մեջքը  
տկլո՞ւ լվանում է իր մարմինը:



Նկ. 4. Մաքրում և  
ատամները խոզա-  
նակով:



Նկ. 5. Սանրում և  
մազերը:

### ԽՆԱՄԵՑԵՔ ԶԵՐ ԱՏԱՄՆԵՐԸ

Աննան իր ատամներին չեր հետեւում և չեր խնամում-  
նրա ատամները միշտ գեղին եյին:


Կաղինն ու ընկույզը ատամներով եր ջարդում. մի-  
անգամ նույնիսկ ատամը կոտրվեց:

Աննայի ատամներն սկսեցին ցավել:

Դպրոցի բժիշկն Աննային ուղարկեց ամբուլատորիա:  
Յերկար ժամանակ Աննան բժկում եր իր ատամնե-  
րը. Ատամներից յերեքն այնպես ելին փշացել, վոր հանել

տվեց: Սրանից հետո Աննան հասկացավ, վոր պետք է  
ատամներին նայի ու նրանց խնամի, և սկսեց միշտ խնա-  
մել իր ատամները:

Նա իր ատամներն ամեն որ խոզանակով ու գոլ ջրով  
եր մաքրում:



Նկ. 6. Ատամների խոզանակ և ատամների փոշի:

### ՊԱՀՊԱՆԵՆՔ ՄԱՐՄՆԻ ՄԱՔՐՈՒԹՅՈՒՆԸ

Բնակարանի մաքրությունից զատ մեր առողջության  
համար հարկավոր է, վոր մեր մարմինն ևս մաքուր պա-  
հենք:

Մարմինը հաճախ պետք է լվանանք գոլ ջրով ու ոճա-  
ռով, պետք է շուտ-շուտ փոխենք սպիտակեղենը, իսկ  
վոտներն ամեն որ պետք է լվանանք:

Յեղունգները հաճախ պիտի կտրենք, վորպեսզի յե-  
ղունգների մեջ կեղտ չհավաքվի:

Կեղտը միշտ հիվանդության բացիլների բուն եւ Դրա  
համար չի կարելի մատները բերանը տանել և յեղունգ-  
ները կրծոտել:

**Յեղունգները հաճախ կտրեցնք:**

Հանձնարարություն՝ Զեր փոքրիկ քրոջն ու յեղունգը ընտելացրեք  
մաքրասիրությանը:

ՀՈԳԱՆՔ ՀԱԳՈՒՍՏԻ ՄԱՔՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Փողոցում ման գալու ժամանակ մեր հագուստի և  
վոտնամանների վրա մեծ քանակությամբ փոշի յե նստում:



Նկ. 7. Մայրը կտրում է յերեխայի յեղունգները:



Նկ. 8. Մայրը լողացնում է յերեխային:



Նկ. 9. Յերեխան խոզանակով մաքրում է հագուստը:

Առանց մաքրելու նրանց պահել չի կարելի. դրա համար տուն հասնելուն պես հագուստն ու կոշիկները պետք ե մաքրենք խոզանակով, թափ տանք և այնպես պահենք:

Հանձնարարյան՝ Պահպանեցեք հագուստի և կոշիկների մաքրությունը: Կազմեցեք պլակատ նրանց նայելու մասին և փակցրեք դժուարանի պատին:

## ՄԱՔՐՈՒՐ ՊԱՀԵՑԵՔ ԱՆԿՈՂԻՆԸ

Անկողնում մենք անց ենք կացնում մի քանի ժամ՝ իսկ ձեզ նման փոքրերը տամ են քնում։ Ուստի անկողինը պետք է մաքուր պահենք։ Յերկույթերեք որը մի անգամ պետք է անկողինը դուրս բերենք արևի տակ։

Քնելուց առաջ պետք է հանենք ցերեկվա շապիկը և հագնենք գիշերային շապիկը։ Աս նրա համար ե, վոր մեր մաշկը նույնպես շնչում է, վորի պատճառով քրտնոտում է շապիկը։

Չեղանից յուրաքանչյուրը պետք է առանձին մահճակալ ունենա։

Քնելուց առաջ սենյակի պատուհանները պետք է մի քանի ժամ բաց պահել։

Տաք յեղանակին քնելու ժամանակ պատուհանը միշտ պետք է բաց մնա։

Ննջարանում չի կարելի ծխել։

Հանձնարարություն։ Այս հատվածից արտադրեցեք այն կտորները, վորտեղ խոսվում է անկողնի մաքրության մասին։

Արտագրեցեք այն կտորները, վորտեղ խոսվում է ննջարանի ողի մասին։ Կազմեցեք պլակատներ տնկողնի և նընջարանի ողի վերաբերյալ։

Պլակատները կախ տվեք աշխատանքի սենյակում։

## ՊԱՀՊԱՆԵՆՔ ԲՆԱԿԱՐԱՆԻ ՄԱՔՐՈՒԹՅՈՒՆԸ

Առողջության համար մեծ նշանակություն ունի բնակարանը։

Բնակարանը պետք է լինի չոր, արևոտ, մաքուր։ Խոնավ ու արևից դուրկ բնակարանը մնասում է մաքուր առողջությանը։

Բնակարանն ամեն որ պետք է մաքրել, հատակը թաց խոզանակով կամ ավելով պետք է ավել։

Սենյակը կարդի բերելու ժամանակ պետք է բանալ զոներն ու լուսամուտները, վոր փոշին դուրս գնա։ Կահկարասիներից թողը պետք է խոնավ փալասով մաքրել։

Սենյակի գոների առաջ պետք է թաց փալաս փոել, վորպեսզի նախքան սենյակ մտնելը փոշոտված փոտները մաքրենք։

Հագուստն ու կոշիկները պետք է դուրսը մաքրել և վոչ սենյակում։

Վորտեղ արև ու մաքրություն կա, այնտեղ բժիշկը հազվագյուտ հյուր է

Փոշին մարդու առողջության մեծ թշնամին է

## ՄԵՐ ԹՇՆԱՄԻՆԵՐԸ



Անմաքրությունն ու կեղտուությունը նպաստում են փայտոջի, լիի և վոջիլի բազմանալուն։ Սրանք ծծում են մարդու արյունը և շատ են անհանգույացնում նրան։

Հարկավոր է սրանց դեմ պայքարել ու վոչնչացնել. իսկ սրա համար անհրաժեշտ է, վոր մաքրություն պահպանենք։

Մաքրուր պետք է պահենք բնակարանը, մարմինը շուտ-շուտ պետք է լվանանք և հաճախակի փոխենք սպիտակեղենը։

Այս մնասակար միջատները բազմանում են ձվերի միջոցով. վորտեղ պատճեք սրանց ձվերին, անպայման վոչնչացրեք։

Վոջիլը արագ ե բազմանում:

Վեց որվա ընթացքում նա հարյուրից ավելի ձռւ յե  
ածում:

Զգեր ե ածում մազերի մեջ, կաշվի ծալքերում և  
սպիտակեղենի վրա:

Վոջիլ վոչնչացնելը դժվար չե:

Յեթե մարմինն ու սպիտակեղենը մաքուր պահենք,  
վոջին անպայման կվոչնչանա:

Յեթե մազերի մեջ ձգեր ե ածել, պետք ե վոչնչաց-  
նել գեղատան դեղով: Այս դեղը պետք ե քսել մազերին,  
ու արորել նաև գլխի կաշին, վորից հետո հարկավոր ե  
գլուխը փաթաթել և յերկրորդ որը լվանալ:

Սրանից հետո վոջիլը կվոչնչանա:

### ՎՈՉՆՉԱՅՆԵՆՔ ՄԵՐ ԹՇՆԱՄԻ ՓԱՅՏՈՉԻԼԻ

Այստեղ, վորտեղ մաքրություն կլինի, վոջիլը, լուն-  
ու փայտոջիլը չեն կարող բուն դնել ու բազմանալ:

Յեթե տան մեջ փայտոջիլ յերկաց, պետք ե նրա  
դեմ հետևյալ կերպ պայքարենք: Զկախենք նկարներ ու  
գորգեր պատերից, վորովհետեւ փայտոջիլները շատ են սի-  
րում հավաքվել նրանց յետեր: Հաճախակի մաքրենք սե-  
նյակը փայտոջիլներից, չթողնենք, վոր նրանք բուն դնեն  
պատերի ծակոտիներում, կահ-կարասիների և անկողնու  
մեջ: Վորտեղ տեսնեք փայտոջիլի ձգեր, իսկույն վոչըն-  
չացը նրանց յեռացը ած ջրով, կամ նավթով:

Փայտոջիլները վոչնչացնելու համար գործ ե ածվում  
նաև դեղորայք, վորը վաճառվում ե գեղատաներում:

Կարմրուկը, քութեշը, բգացավը, ծաղիկը — վարակիչ  
հիվանդություններ են:

Ծաղկից և բգացավից կարող ենք խուսափել սրսկու-  
մի միջոցով:

Ներկայումս խորհրդային իշխանությունը բազմաթիվ  
բժշկական կայաններ ե բացել ինչպես քաղաքներում,  
նույնպես և գյուղերում:

Այս կայաններում սրսկումը կատարվում է ձրի:

Վարակիչ հիվանդություններից պետք ե հեռու մնանք,  
վորպեսզի այդ հիվանդությունները լայն կերպով չտարա-  
ծվեն:

Հիվանդին պետք ե առանձին սենյակում տեղավորել.  
Նրա մոտ պետք ե մնա միայն խնամողը. Նրան վոչվոք  
չպետք ե այցելի, վորովհետեւ նա կարող ե ուրիշին վա-  
րակել:

Առողջանալուց հետո պետք ե հիվանդի սենյակը ախ-  
տահանել: Հիվանդին պետք ե միմայն բժիշկը բժշկե և  
վոչ թե գյուղի գրբաց-հերիմները, վորոնք դեպի մահ են  
տանում հիվանդին:


Հանձնարարություն՝ Զգուշացեք վարակիչ հիվանդություններից:

Հիվանդանալու դեպքում խկույն դիմեցեք  
բժշկին:

Հիվանդությունից մարդք վարակվում է նա-  
յել նազուսի միջոցով. ուրիշ նազուսն առանց  
կանխորոք լինի լու. չիազնեք:

**Ունեցեք առանձին ջրի բաժակ, ընդհանուր բաժա-  
կով ջուր խմելը նպաստում է վարակիչ հիվանդու-  
թյունների տարածվելուն**

## ԼԱՎ ՈՐԻՆԱԿ



Նկ. 11. Բժիշկը սրակում է յերեխաներին:

## ԾԱՂԿԻ ՊԱՏՎԱՍՏՈՒՄԸ ԿԱՄ ԾԱՂԻԿ ԿՑՐԵԼԸ

Գյուղում յերկու յերեխա ծաղկով հիվանդացան: Անհրաժեշտ եր շտապ միջոցներ ձեռք առնել, վոր հիվանդությունը չտարածվի ամբողջ գյուղում:

Բժիշկը հավաքեց գյուղացիներին և բացատրեց, թե ինչպես նրանք պետք է պայքարեն, վոր վարակիչ հիվանդությունը լայն կերպով չտարածվի:

Բժիշկը խստիվ արգելեց բոլորին գնալ այն տունը, վորաեղ տեղափողված ելին ծաղկով հիվանդները:

Բժիշկը նույն որն և ետ սկսեց ծաղկի պատվաստումը: Պատվաստում եր ամենքին, թե փոքրին և թե հասկավորին:

Հաճախարհություն՝ Բոլորդ ել ծաղիկ կտրեցեք:

Մի որ մայրն ու Մարոն զնում ելին փողոցով, Մարոն մի տան դռան վրա նկատեց խոշոր տառերով գրած՝

## Ք Ո Ւ Թ Ե Շ

Մայրը այս մակագրությունը տեսավ թե չե, իսկույն Մարոյին մյուս մայթն անցկացրեց:

— Տեսնո՞ւմ ես, Մարո, — ասաց մայրը, — այս տանը քութեշով հիվանդ կա. ինչքան լավ են վարվել, վոր այս մակագրությունը կպցը են դռան վրա:

Այս մակագրությունը նախազգուշացնում ե, վոր ամենքը հեռու մնան այս տնից:

Դու ել, զավակս, սրանից հետո այս տան մոտով չանցնես:

2585  
1006  
29623

## Ք Ո Ս


Կարոն կեղտոտ յերեխա յեր, նա ձեռքերը չեր լվանում:

Մի որ նրա ձեռներն սկսեցին քոր գալ, մի քանի որից հետո ամբողջ մարմինը քորելուց այնպես եր տանջվում, վոր քունը նրա աչքերին չեր մոտենում:


Մայրը յերեխային բժշկի մոտ տարափ:

Բժիշկը քննեց Կարոյին և ասաց.

— Այ տղա, դու վարակված ես քոսով: Քոսն առաջ և գալիս կեղտոտությունից և անմաքրությունից: Կեղտի հետ միասին կաշվի տակ ե մտել տիզը, նա շատ ե սիսում կեղտը: Տիզը բազմացել ե և այդ պատճառով ամբողջ մարմինդ քոսովին եւ:




Նկ. 12. Տիզ:



Քոսը վարակիչ ե. վոչվոքին ձեռք չտաս:  
Բժիշկը կարոյի համար գրեց կանաչ ոճառ, սպեղանի:  
Քացի դրանից, մորը խրատեց, վոր կարոյին չթողնի ուրիշի՝  
անկողնի մեջ քնելու և նրա համար ունենա առանձին  
յերեսսրբիչ:

Հանձնարարություն՝ Քոսով հիվանդանաք թե չե, դիմեցեք բժշկին:  
Մինչև չառողջանաք, դպրոց չհաճախեք:  
Ուրիշին ձեռք չտաք:  
Քոսով հիվանդանալու ժամանակ կատարիլ:  
Բժշկի բոլոր խրատները:

## ԲՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՇԽԱՆԸ ՑԵՎ ՄԱՐԴՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԸ



Նկ. № 13. Բնությունն աշխանք.

Սեպտեմբերի 23-ին ցերեկն ու գիշերը հավասար-  
վում են,  
Ցերեկն ել 12 ժամ ե, գիշերն ել:  
Սեպտեմբերի 23-ից հետո գիշերն սկսում ե յերկա-  
րել, իսկ ցերեկը՝ կարճանալ:

## ՄԵՐ ՍՆՈՒԻՆԴԸ

Առողջապահությունը պահպանելու համար անհրաժեշտ է, վոր լավ սնվենք:

Ուտելիքը պետք է լինի մաքուր և թարմ:

Սնվում ենք կանաչեղենով, մսեղենով, աղով:

Սնունդն ընդունում ենք տարբեր տեսակի:

Մի մասն յեփած ենք ուտում, մի մասն ել՝ հում:

Յերբ կերակուրը հում ձեռվ ենք ընդունում, պետք է լավ լվանանք, մաքրենք, վորպեսզի նրա վրա թող կամ կեղտ չլինի:

Կերակուրը պետք է հեռու պահենք ճանճերից և թողից, պահելով պահարանում, կամ ծածկոցի տակ:

Հանձնարարություն՝ Կերակուրը մաքուր պահեցեք:

## ՍԻՄԻՆԴՐ

Աշնանային արև որ է:

Սիմինդրի արափից գյուղացիների յերգի ձայնն ելովում:

Այսոր կոլխոզնիկները սիմինդր են կոտրում:

Դեղնավուն սիմինդրը լցնում են քթոցները և սայլերին բարձելով, տուն են բերում:

Սիմինդրի չորացած ցողուններն ել հավաքում են ու պահում ձմեռն անասուններին կերակրելու համար:

Կոլխոզնիկները սիմինդրը հացահատիկի նման չկալացնին, այլ ձեռքով փշեցին:

Ամբողջ սիմինդրը միանգամից չաղացին, այլքիչքիչ, վորովնետե նրա ալյուրը շուտ և դառնանում ու անպետքանում:

Հանձնարարություն՝ 1. Դիտեցեք վորքան հասկ կայուրաքանչչուր ցողունի վրա:

2. Համեմատեցեք իրար հետ առողջ և հիվանդ հասկերը:

Պարզեցեք ինչով են տարբերվում նրանք իրարից:

3. Գրեցեք՝ ինչույն պետք սիմինդրը մարդուն:

**Ոգնեցեք կոլխոզնիկներին սիմինդրի բերքը  
հավաքելու ժամանակ**



Նկ. 14. ՍԻՄԻՆԴՐ


Ի մ ա ց ե ք.

1. Վոր կոլխոզի բանջարանոցումն եյիք:
2. Ի՞նչ բանջարներ տեսաք:
3. Ի՞նչպիսի աշխատանքներ են՝ տարվում բանջարանոցում:
4. Ի՞նչ ձեռվ եյին բերքը բաշխում կոլխոզի անդամների միջև:

Եքսկուրսիայի ժամանակ կատարեցեք հետեւյալ դիտողություններ։

Փորեցեք կարտոֆիլի թուփը և ուշադրությամբ գննեցեք նրա արմատներն ու պտուղները։

Հաշվեցեք՝ մի արմատի վրա քանի հատ կարտոֆիլ կա։



Նկ. 15. Կոլխոզի բանջարանոցում. Բանջարեղենի հավաքելը։



Նկ. 16. Զանազան բանջարներ։

Ա Ն Կ Ե Տ Ա.

Պարզեցեք գույները

1. Ճակնդեղի (բազուկի)
2. Գաղարի
3. Հասած պամիդորի
4. Բաղրիջանի
5. Սխտորի
6. Կաղամբի
7. Վարունգի

Հանձնարարություն՝ Արտագրեցեք այս հարցացուցակի հարցերը ձեր տեսարում և պատասխանեցեք։  
Յուրաքանչյուր պատասխանի կողքին նկարեցեք համապատասխան բանջարեղեններ և ներկեցեք այն. գունավոր թղթերից ձեւցեք բանջարեղեններ և կպցրեք ստվարաթղթին ու կախեցեք պատից։

ԼՐԱՑՐԵՔ միտքը

Սոխը կծու յե	.	.	.	.	.	.	.	.	.	.	.	.
Ճակնդեղը	.	.	.	.	.	.	.	.	.	.	.	.
Սխտորը	.	.	.	.	.	.	.	.	.	.	.	.
Պամիդորը	.	.	.	.	.	.	.	.	.	.	.	.
Թլթնջուկը	.	.	.	.	.	.	.	.	.	.	.	.

Հանձնարարություն՝ Այս հարցերին գրավոր պատասխանեցեք:

Ա. բ ա ա գ ր ե ց ե ք

Սրանցից վճռն ե բանջար, վորը հացահատիկ և վժրը  
միրդ.—

Լորի, բակլա, տանձ, սիմինդը, բողկ, սալոր, տաքտեղ,	.	.	.	.	.	.	.	.	.	.	.	.
գարի, կաղամբ, գեղձ, կորեկ, թուզ,	.	.	.	.	.	.	.	.	.	.	.	.
Բանջարեղեն	.	.	.	.	.	.	.	.	.	.	.	.
Հացահատիկ	.	.	.	.	.	.	.	.	.	.	.	.
Միրդ	.	.	.	.	.	.	.	.	.	.	.	.

ՎՈՐ ԲԱՆԶԱՐԱԲՈՒՅՍԻ ՎՈՐ ՄԱՍՆ ԵՆՔ ԳՈՐԾԱԾՈՒՄ  
ՈՒՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Արմատ	Պտուղ	Տերե	Հատիկ

Հանձնարարություն՝ Նկարեցեք նման մի տախտակ և լրացրեք:

Հիշեցի՞ Այն բանջարաբույսերը, վորոնց պտուղներն արմատի  
վրա յեն լինում, կոչվում են արմատապտուգ  
բույսեր:

ԲԱՆԶԱՐԵՂԵՆԻ ՊԱՀԵԼԸ

Վորպեսզի բանջարեղենը չփչանա, անհրաժեշտ եր  
վոր գիտենանք նրա պահելու ձևերը:  
Բազուկը, գազարն ու կարտոֆիլը պետք ե պահենք  
հորերի մեջ:

Հորի խորությունը պետք ե լինի մեկ մետր, յերբ  
հորի մեջ լցնում ենք պտուղները, վերևից անպայման  
պետք ե հող ածենք:

Սխտորն ու սոխը պետք ե շարենք ու կախ տանը  
առաստաղից:

Կ ա տ ա ր ե ց ե ք հ ե տ կ յ ա լ փ ո ր ձ ը

Վերցրեք բազուկը, գազարն ու կարտոֆիլը և դրեք  
դարակի վրա, նույն բանջարեղենից թաղեցեք հողի մեջ ել:

Վերցրեք բազուկը, գազարն ու կարտոֆիլը և դրեք  
դարակի վրա, նույն բանջարեղենից թաղեցեք հողի մեջ  
ել: Մի քանի դլուխ կաղամբ կախ տվեք այնպես, ինչպես  
վերն ասացինք, իսկ մի քանիսն ել դարսեցեք դարակի  
վրա իրար կողքի:

Մի քանի ամսից հետո տեսեք, թե նրանցից վճռն ե  
լավ պահվել ու թարմ մնացել՝ ինչ կպատճեր դարակի  
վրա դարսած բանջարեղենին:

Հանձնարարություն՝ Յեղակացությունը գրեցեք զրատախտակի  
վրա և ապա արտագրեցեք տետրերում:

Վ ո ր բանջարն ի՞նչ ձեռվ ենք պլահում:

Զորացնում ենք	Աղ ենք դնում	Ցեփում ենք	Պահում ենք թարմ կերպով

Հանձնարարություն՝ Կազմեցեք նման ցուցակ և լրացրեք:



Ա Յ Գ Ի

Աշնանն այգին զեղեցկանում եւ:  
Կանաչ տերեների տակից յե-  
րկում են զանազան մրգեր՝ խըն-  
ձոր, տանձ, թուզ, նուռ, ունաբ,  
ընկույզ, փշատ, սալոր և այլն:

Ծառերը հեռու-հեռու են տըն-  
կում իրարից, վորպեսզի նրանցից  
ամեն մեկը ստանա արեի ճառա-  
գայթներ և կարողանա աճեր, զար-  
գանալ ազատ կերպով:

Ծառերի ճյուղերը պտուղների ծանրությունից գետ-  
նին են թեքվել. այսպիսի ճյուղերի տակ պետք է նեցնուկ-  
ներ կանգնեցնել, վոր չկոտրտվեն:

Հանձնարարություն՝ Ի՞նչ գույն ունի միրգը մինչև հասունանալը.  
Ի՞նչ գույն ե ստանում հասունանալուց հետո:  
Ել ի՞նչպիսի մրգեր գիտեք:

Եքսկուրսիա կատարեցեք դեպի կուխողի  
այգին և իմացեք՝

1. Ի՞նչ տեսակ պտղատու ծառեր կան:
2. Վոր միրգը յերբ ե հասունանում:
3. Վոր մրգի ծառն ե ամենից մեծը:
4. Վորն ե փոքրը:
5. Ի՞նչ մրգի թուփ տեսաք:
6. Ի՞նչպիսի աշխատանք եր տարվում այգում:
7. Ի՞նչպես ե բաշխվում այգու բերքը կոլխոզի ան-  
դամների մեջ:

Հանձնարարություն՝ Այս հարցերն արտազրեցեք տեսրի մեջ և  
եքսկուրսայի ժամանակ պարզեցեք ու պա-  
տասխանեցեք զրավոր:  
Կավից ծեփեցեք այգի, ոգտագործեցեք վոր-  
պես շինանյութ՝ կավ, ծառի ճյուղեր, ներ-  
կեր և կանաչ թուղթ:

Մ Բ Գ Ա Հ Ա Վ Ա Ք

Բոլոր տեսակ մրգերը միաժամանակ չեն հասունանում:

Մի քանիսը շուտ են համնում և շուտ ել հավաքվում են. մի քանիսն ուշ են համնում՝ հետևաբար ուշ ել քաղցրւմ են:

Միրզը պետք ե քաղել կոթով և զգուշությամբ դարսել զամբյուղների մեջ, վոր չփառվի:

Առանց կոթի քաղած միրզը շուտ ե փշանում ու փտում:

Վնասաված, ջարդված, չանգուած ու ճիճվոտ միրզը պետք ե առանձնացնել լավերից և նրանցից չիր պատրաստել:

Հանձնարարություն՝ Գրավոր կերպով պատասխանեցեք հետևյալ հարցերին:


1. Վ՞ր մրգիցն ենք պատրաստում չիրը:
2. Վ՞ր մրգիցն ենք մուրաբա յեփում:
3. Վ՞ր մրգիցն ենք բաքմազ պատրաստում:
4. Վ՞ր միրզն ենք չորացնում:

Ի ՞ն չ գ ու յ ն ի յ ե

Խնձորը . . . . .
Սերկեփլը . . . . .
Տանձը . . . . .
Նուռը . . . . .
Սալորը . . . . .
Ունաբը . . . . .
Դեղձը . . . . .

Հանձնարարություն՝ Այս հարցերն արտագրեցեք տետրում ու պատասխանները զրեք կողքին:

Պատասխանից հետո նկարեցեք համապատասխան միրզն ու ներկեցեք այն:



Նկ. 18. Մրգահավաք:

Ի մա ց ե ք ի ն չ մ ի լ դ ե .

Սեղանի վրա դարսեցեք զանազան մրգեր. ձեր ընկերներից մեկի աչքերը կապեցեք, մոտեցրեք սեղանին. Շոշափելով թող իմանա, թե վորը ինչ միրդ եւ նման փորձ բոլորդ ել կատարեցեք հերթով։

ՎՈՐ ՄԻԹԳՆ ԻՆՉ ՀԱՄ ՈՒՆԻ

Ք Ա Ր Ա Ր	Թ Բ Ա Ր

Կազմեցեք նման տախտակ և վրան գրեցեք՝ վճռ միրդն եւ քաղցր, և վճռը՝ թթու։



Նկ. 19. Իմացեք՝ վճռ որանցից կերակ քաղցր միրդ և վճռը թթու։

## ԴԻՏԵՑԵՔ ՈՒ ՊԱՐԶԵՑԵՔ

- Ինչով ե պատաժ խնձորը.
- Ել վոր միրգը թաղանթ ունի.
- Ինչու համար ե այս թաղանթը.
- Ի՞նչպիսի յե այս թաղանթը—նորը ե, թե պինդ (կճպեցեք).
- Ի՞նչպիսի պատյան ունի ընկույզը, նուշ (կոտրեցեք).
- Ի՞նչպես ե կոչվում նրանց մաշկը.
- Ել ինչ պառող գիտեք, վոր պատաժ լինի կճեպով։

Հանձնարարություն՝ Խմբավորեցեք մրգերն ըստ նրանց մաշկի և զրեցեք վորն ո՛ Բարակ մաշկով . . . . . Կճեպով . . . . .

## Պ Ա Ր Զ Ե Ց Ե Ք

### Վ Ո Ր մ ի լ դ ն ե

Կ Ա Ր Ի Կ Ա Վ	Ա Ն Կ Ա Ր Ե Վ	Հ Յ Ո Ւ Թ Ա Լ Ի	Ա Ն Հ Յ Ո Ւ Թ Ա Լ Ի

Հանձնարարություն՝ Գծեցեք տետրի մեջ այսպիսի տախտակ և լրացրեք՝ Ժողովեցեք զանազան մրգերի կորիզներ, կողովեցեք զանազան մրգերի կորիզներ, կպցրեք ստվարաթղթի վրա և տակը գրեցեք, թե վճռ մրգի կորիզն եւ։

Պատրաստեցեք՝ խնձոր, տանձ, դեղձ, սալոր, սերկե-  
պիլ և դանակներ:

Կեպարեք մեջտեղից խնձորը, տանձը, սերկելը և  
տեսեք քանի կորիզ ունի:

Ի՞նչ գույնի յեն այդ կորիզները:

Ինչպիսի մաշկ ունեն այդ կորիզները—նուրբ, թե  
ամուր, հանեցեք մաշկը և տեսնք ներսը ի՞նչ կա տեղա-  
փորփած:

Կիսեցեք դեղձը, սալորը և տեսեք քանի հատ կորիզ  
ունի ամեն մեկը:

Ի՞նչ տեսակ ե այս կորիզների մաշկը.

Զարդեցեք կորիզը և տեսեք ի՞նչ կա ներսը տեղա-  
փորփած:

Համեմատեցեք իրար հետ խնձորի, տանձի, դեղձի և  
սալորի կորիզները ու պարզեցեք, թե տարբերություն կա  
նրանց մեջ:

### ԻՆՉՊԵՍ ՊԱՀԵԼ ՄԻՐԳԸ

Միրգը պահում ենք նաև ձմեռվա համար: Այն միրգը,  
վոր պահելու յենք, չպետք ե լինի վսասված, ջարդված,  
չանգուտած, ճիճվոտ և անկոթ: Միրգը պետք ե դարսվի  
շարքով իրարից հեռու:

Ժամանակ առ ժամանակ հարկավոր ե միրգը ջոկել,  
զտել, յեթե նրանց մեջ փտած կա, պետք ե հեռացնենք  
մյուսներից, վորպեսզի առողջներն ել չփտեն:

Միրգ պահելու տեղը պետք ե չոր լինի:

Խոնավությունը վնասում ե մրգին:

Համեմատություն՝ Պահեցեք մի քանի հատ վսասված, ջարդված  
միրգ և մի քանի հատ ել առողջ: հետեցեք,  
թե նրանցից վորը կփտի:

### Հ Ա Կ Մ Բ Ե Ր

Ամսաթիվ	Ցեղանակ
1.	
2.	
3.	
4.	
5.	
6.	
7.	
8.	
9.	
10.	


Համեմատություն՝ Միշտ կազմեցեք նման որացուց:  
Ի տեղեկություն՝ Արև որը նշանակեցեք կապտագույն շըմա-  
նով, ամպամած որը՝ մոխրագույն, անձրեւ  
ստորակետներով, քամին՝ թեք գծերով:

### Ա Յ Ֆ Ի

Գեղեցիկ ե այգին աշնանը.

Հասած խաղողը չի կարողանում այլեւ թափնվել տե-  
րեմերի յետեր: Դեղին ու սև վողկույզներն իրենց սիրուն  
տեսքով բոլորին գրավում են: Մոծակն ու ձանձը հասած  
խաղողի շուրջն են հավաքվում:

Արդեն այգեկութիւն ժամանակն եւ Յեթե յուր պահին  
չքաղենք, խաղողի հատիկները ցած կթափվեն, ուստի մեծ  
յեռ ու գետի մեջ են կոլխոզնիկները: Նրանք պատրաստ-  
վում են այգեկութիւն համար: Կարասները մաքրում, լվա-  
նում են: Նրանցից մի քանիսն ել կթոցներն են կարգի  
բերում:



Նկ. 20.

Այգեկութեա:

Կոլխոզնիկները հավաքվել են այգում ու խաղող են քաղում: Քաղած խաղողը վողկույզներով արագ-արագ լցնում են կթոցներն ու զամբյուղները:

Խաղողի կթոցներով բեռնված սայլերը ձոճուալով շարժվում են դեպի մառանները, իսկ մառանում ձմռող մեքենան յեռանդով աշխատում է ու քամում խաղողը:

Քաղցը հյութը խողովակով վազում է դեպի կարասները:

Հանձնարարության՝ Ծեփեցնը այգի անծանոթ և անհասկանալի բառերն իրենց բացատրություններով մըտցրեք բնագիտական բառարանի մեջ:



Նկ. 21. Խաղողի վորթեր (ձյուղեր):

Նոր քամած խաղողի հյութից բաքմազ են յեփում և  
սուջուխ պատրաստում:

Խաղողի հյութը յեփում ենք ու պահում ձմեռվա  
համար:

Յեփած հյութը յերկար ժամանակ պահվում է, նույ-  
նիսկ մինչև խաղողի նոր բերքը. մենք յերբ ուղենանք,  
կարող ենք նրանից բաքմազ յեփել:

Խաղողը կարելի յե թարմ պահել ամբողջ ձմեռը, յեթե  
նրա պահելու ձեն իմանանք:

Խաղողը շատ լավ պահվում ե թեփի մեջ:  
Խաղողից պատրաստում ենք նաև չամիչ\*):

Ելի ինչպես և ոգտագործում մարդը խաղողն ու նրա հյութը:

\*.) Չամիչ պատրաստում են այսպես.—յերկար ձողի վրա  
շարված խաղողը, ճացը թիւելուց հետո, կախում են թոնրի մեջ,  
թոնրի բերանը փակում են: Մինչև առավոտ մնում ե խաղողը  
թոնրի մեջ: Չամիչն ամբողջ ձմեռ լավ ե պահվում: Նրանով  
սուջուխներ են պատրաստում:

### ԱՇԽԱՆ ՎԱՐ ՈՒ ՑԱՆՔ

Տրակտորն արագությամբ հերկեց ընդարձակ դաշտը:  
Հերկած դաշտում այժմ սերմացան մեքենան ե աշ-  
խատում:

Շարքով ե ցանում մեքենան սերմի հատիկները:  
Թռչունները հարձակվում են, վոր սերմի հատիկները  
կտցահարեն, բայց նրանք չեն կարողանում հասցնել, վո-  
րովինեաւ փոցիւը արագությամբ հողի տակ ե թաղում  
սերմը:

Կուլիսուղի աշնանային աշխատանքը

Ինչ աշխատանք կատարեց կոլխոզը՝

Բանջարանցում . . . . .

Պաղատու այգում . . . . .

Խաղողի այգում . . . . .

Դաշտում . . . . .

Հանձնառարկություն՝ Այս անկետան արտագրեցեք տետրների մեջ  
և գրավոր պատասխանեցեք հարցերին:

### ՎՈՐՏԵՂ ԵՆ ՄԻՋԱՏՆԵՐ

Ամառվա ընթացքում մենք հանդիպում ենք բազ-  
մաթիվ միջատների, սակայն, յերբ աշունը յեկավ միջատ-  
ներն ել անհետացան. Նրանցից մի քանիսը մտան ծա-  
ռերի կեղևների տակ ու բներ շինեցին, մի քանիսը մտան  
հողի մեջ ձմեռն անցկացնելու համար, իսկ վոմանք ել  
հողի մեջ ձվեր ածեցին ու իրանք վոչնչացտն:

Միջատները ձմեռվա քուն են մտնում, նրանք քնած  
են լինում մինչև գարուն, իսկ գարնանը, յերբ արեգակը  
տաքացնում է գետինը. Նրանք ել արթնանում են ու աշ-  
խուժանում, ձվերից գուրս են գալիս փոքրիկ միջատներ:

Հանձնառարկություն՝ 1. Փորեցեք հողն ու գտեք այնտեղ միջատ-  
ներ ու նրանց ձվերը:

2. Դասարան բերեք մամուռով պատած կոճղ  
կամ փայտի կտոր, վորի տակ անպայման  
միջատներ կլինեն թագկացած:

Կատարեցեք գիտողություն միջատների վրա. Ինչպես են ազդում միջատների վրա արեսու  
ու ամպամած յեղանակները:  
Վճրաեղ են այժմ միջատները:



Նկ. 22. Թռչունների չուն:

### ԹՌՉՈՒՆՆԵՐԻ ԶՎԵԼՈՒ ՊԱՏճԱՌՆԵՐԸ

Թռչուններից շատերը սնվում են միջատներով, գոմանք ել հացահատիկներով:

Չմեռ ժամանակ վոչ մեկը կա և վոչ մյուսը. ուստի թռչունները շատ են նեղվում ու սննդի պակասություն զգում:

Այն թռչունները, վորոնք սնվում են հատիկներով, մի կերպ անց են կացնում ձմեռը. Նրանք կտցահարում են ծառերի կեղևները, ձյունի տակ փնտռում են հացահատիկներ և այլն: Մի քանիսը նրանցից, ինչպես որինակ ճնճղուկը, համարյա թե սնվում է մարդկանց սեղանի ավելցուկով. Նա պատսպարվում է մարդու բնակարանի մոտ:

Ագռավները սնվում են մսեղենով. սակայն միջատակեր թռչունները կարող են ձմեռ ժամանակ սովամահ լինել, յեթե նրանք չվելու շինեն դեպի տաք յերկրները, վորաեղ սննդանյութ շատ ե ճարվում նրանց համար:

### ԹՌՉՈՒՆՆԵՐԻ ԶՈՒՆ

Շատ են անհանգստանում թռչունները մինչև չվելը: Նրանք խումբ-խումբ հավաքվում են ու ծվծվում:

Մեծ դժվարությունների յեն հանդիպում նրանք չվելիս: Նրանցից շատերը ճանապարհին վոչնչանում են:

Շատերը գիշատիչ թռչունների բաժին են գառնում, շատերին փոթորիկն ե վոչնչացնում, շատերը ծովս են թափվում ու խեղդվում: Մարդիկ ել չեն ինայում թըռչուններին: Մեծ քանակությամբ վորսում են ու մորթուում:



Նկ. 23. Թռչուններ:

Գըեցեք—կորոնք են սրանցից չվում և կորը մեղմութեան:

ԶՎՈՂ ԹՌՉՈՒԽՆԵՐ

B. 2. n. e. 2. 2. b. p. p.	p. 2. q. b. 2. a. 2. q. n. d.

*U b q m u m m u w g n q n k p p*

B. u. n. e. n. n. h. p. l.	h. u. z. o. q. b. u. n. n. q. n. e. n.
----------------------------	--

Հանձնուարություն՝ Կազմեցեք այսպիսի տախտակ և լրացրեք:

F U T H

Քամին միշտ միատեսակ չի փշում, լինում է ուժեղ  
և թռվյալ:

Ուժեղ քամին խոշոր վասաներ և հասցնում մարդուն։  
Հաճախ նա ջարդում և ծառերի ճյուղերը, լուսամու-  
տի ապակիները ու տանիքը պոկում։

Քամին փշացնում ե նաև արտը՝ ցորենի ցողունը  
կոտրում, պառկեցնում ե գեանին, թափում ե հատիկները  
և այլն:

Սակայն, վսասների հետ, նա քերում է նաև ոգուտ-ներ. նրա շնորհիվ պատվում են ջաղացի անիվները և ցորենն աղում, ծովի վրա նա քշում է առագաստանավերը և այլն:

Բայի դրանից, քամին մեծ քանակությամբ զանազան սերմեր ե տարածում այս ու այն կողմբ:

Ելի ի՞նչպիսի վասներ կարող ե հասցնել քամին  
մարդուն:

“Ո ի ս ե ց ե մ” Տան կտուրի վրա բուսել և խռո կամ ձաղիկ-  
ինչպես առաջ յեկավ նա այնտեղ:

ՔԱՄՈՒ ՈՐԱՅՈՒՅՑ

Σ ο λ ι σ ί π ι π

Ամսաթիվ	Քամին փշում եր	Քամ մի չկար

Հանձնաւարություն՝ կազմեցեք քամուն հետևելու 10-րդից սրացույց և ձեր գիտողությունը զրի առեք միջը։ Ամսի վերջը պարզեցեք, թե ամբողջ ամսվա ընթացքում քանի որ քամի յե յեղել։ Նման որացույց կազմեցեք նաև սոյեմբեր ամսին։

Ի՞նչով կԱՐՈՂ ԵՆՔ ԻՄԱՆԱԼ ՔԱՄԻ ԿԱ, ԹԵ ՎՈՉ

ՄԵՆՔ ՄԵԽՆՈՒՄ ԵՆՔ, ԹԵ ՄԵՆՔ ԻՄԱՆՈՒՄ ԵՆՔ, ՎՈՐ  
ԻՆՉՊԵՍ Ե ՔԱՄԻՆ ՉԱՐԺՈՒՄ ՔԱՄԻ ԿԱ: (ԻՆՉՈՎ):  
ՃԱՌԻ ՃՅՈՒՂԵՐԸ. ՆԱ ՉԱՐ-  
ԺՈՒՄ Ե ՆԱԿ ՄԵՐԻՆԵՐՆ Ու  
ՃԱԺԱՆՈՒՄ ՊՐՈՂԱԼՆԵՐԸ։

ՅԵՐՔ ՔԱՄԻՆ ՓՀՈՒՄ Ե, ԻՄԱՆՈՒՄ ԵՆՔ, ՎՈՐ ՔԱՄԻ  
ՄԵՆՔ ԼՍՈՒՄ ԵՆՔ՝ ԻՆՉՊԵՍ ԿԱ: (ԻՆՉՈՎ):  
ՄԵՐԻՆԵՐԸ ՍՈՍԱՎՈՒՄ ԵՆ:

ՔԱՄԻՆ ՊԳՈՒՄ ԵՆՔ ՆԱԿ ԶՊՈՒՄ ԵՆՔ, ՎՈՐ ՔԱՄԻ յի:  
ՄԵՐ ՄԱՐմԻԻ ՄԱշկով: (ԻՆՉՈՎ):

Հանձնաւարություն՝ Պատասխանեցեք այս հարցերին. գործածեցեք հետեւալ բառերը՝ լսողություն, շոշափելիք և տեսողություն։

Տ Ե Ր Ե Ւ Ա Թ Ա Փ

Աշուն ե:  
Ծառերի տերեների գույնը փոխվեց, մի քանիսը  
նրանցից գեղնեցին, մի քանիսը կարմրավուն գույն ստա-  
ցան և այլն։ Գեղեցիկ ե այս ժամանակ անտառը։ Նա  
բազմագույն ե գառնում, աշնանային ցուրտ քամին սրվ-  
սը գումար է անտառի միջով։ Ճառի տերեները փափռալով  
ցած են թափվում ու գետինը ծածկում բազմագույն վեր-  
մակով։



Նկ. 24. Տ Ե Ր Ե Մ Թ Ա Փ.

ՏԵՐԻՆԵՐԸ ԾԱԾԿԵցին ԲՈՒյՆԵՐԻ արմատները, նրանք  
այլևս չեն վախենում վոչ մի բանից. բայց բոլոր ծառերի  
տերեները միաժամանակ չեն թափվում։ Ծառերից վոմանք  
շուտ են մերկանում, վոմանք ուշ։

Գ ի ս ե ց ե ն՝ թե վոր ծառից են տերեները շուտ թափվում։  
Կազմեցեք աշնան տերեների հավաքածու։

ՏԵՐԵՎՆԵՐԻ ԳՈՒՅՆԸ ԱՇԽԱՆԸ

Դ Ե Կ Ւ Ն	Կ Մ Պ Ժ Բ Բ	Գույնդղույն	Կ Մ Ա Ա Հ

Հանձնարարություն՝ Շինեցեք այսպիսի տախտակ և տերեներն ըստ իրենց գույների կպցրեք համապատասխան սյունյակների տակ,

ԿԱՏԱՐԵՑԵՔ ԵՔՍԿՈՒԽՄԻԱ ԴԵՊԻ ԱՆՏԱՌ

Դ Ի Մ Ե Գ Ե Ք.

- Ինչպիսի ծառեր են աճում ձեր մոտակա անտառում՝ փշատերե՞վ, թե սաղարթավոր:
- Նրանցից վորի տերեներն են թափվում աշնանը:
- Ինչ գույն ունեն սաղարթավոր ծառերի տերեներն աշնանը:
- Իրար հետ համեմատեցեք փշատերի և սաղարթավոր ծառերի տերեներն գույներն աշնանը:
- Կանաչ խոտի փոխարեն ինչո՞վ ե ծածկված լինում անտառի գետինն աշնանը:
- Թռչունների ծլվոցը լսվում ե, թե վոչ:
- Պոկեցեք ծառի կեղևն ու տեսեք՝ ով ե բուն դրել այնտեղ:

Հանձնարարություն՝ 1. Ժողովեցեք տարրեր գույնի տերեներ:

2. Կաղմեցեք տերենաթափի պլակատ:

ԳՆՇԵՐՆ ՅԵՐԿԱՐԵՅ, ՅԵՐԵԿԸ ԿԱՐՁԱՅԱՎ

Նոյեմբեր ամիսն ե։ Շատ ուշ ե լուսանում, մարդկարձում ե՝ թե գեռ չի լուսացել, այն ինչ արդեն վեր կենալու ժամանակն ե։

Յերեխաները շտապ-շտապ վեր են կենում, լվացվում են, նախաճաշում ու վազում են դպրոց։

Ճաշից հետո նույնիսկ խաղալու ժամանակ չի մնում, իսկույն մուլթն ընկնում ե։ Աշնանը ցերեկը կարձանում է, իսկ գիշերն յերկարում։

Յերեխաները գիշերն են դասերը պատրաստում ու գիրք կարգում։

Հետևեցեք, թե մթնելուց հետո ինչքան աշխատանք եք կարողանում կատարել։

Աշնան ամիսներն են՝

Սեպտեմբեր,

Հոկտեմբեր,

Նոյեմբեր։

ՄԱՐԴՈՒ ԶՄՈՒՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Աշնանը հաջորդում ե ցուրտ ձմեռ:

Զմռանը գետինը ծածկվում է խոր ձյունով։ Ցուրտն ու սովը կփռնցացնեն մարդուն, յեթե նա նախորդը չպատրաստվի ձմռանը դիմավորելու համար։

Այս պատճառով մարդը նախապատրաստվում է – մննդի պաշար և պատրաստում, հացահատիկ, բանջարեղեն, միրգ և պահում ու ապահովում ե տաք հագուստով։

Անառանից փայտ և բերում, սղոցում ու վառելիք պատրաստում։

Մինչեւ վառարան վառելը անհրաժեշտ ե, վոր մաքրենք ծինելույզները, թե չե հեշտությամբ հրդեհ կը նկնի։

Մարդն իրան և ընտանի կենդանիների համար ի՞նչ պես ե ձմեռվա պաշար պատրաստում։

## Մ Ե Բ Փ Ի Ս Ի Կ Բ

Սոսն ու Սաթոն խաղում եյին իրենց փիսիկի հետ:  
Փոքրիկ պարանի ծայրին թղթի կտոր են ամբացըել  
ու վազվում են սենյակում:

Փիսիկն աշխատում է բռնել թուղթը. փիսիկը վազեց  
սեղանի տակ ու գարան մտավ, այս պահին թղթի կտորը  
նրա առաջով սահեց. հանկարծ ցատկեց ու թաթերով  
բամփեց թղթին. Փիսիկը խլեց յերեխաներից թղթի  
կտորը ու մտավ թախտի տակը:

Սոսն ու Սաթոն ուրախ քրքջում եյին:

Յերեխաները թախտի տակից դուրս բերին կատվին  
ու սկսեցին նրան փաղաքշել:

— Մայրիկ, մեր փիսիկի մազերը տես վոնց են մեծացել — ասաց Սաթոն իր մորը:

— Այդ մազերը նրա համար են, վոր ձմռանը փիսիկը  
չմրսի:

— Ուրեմն, սա ել ձմեռվա համար ե պատրաստվել  
հա, — ասացին յերեխաները:

## Մ Ո Ւ Կ Բ

Մոխրագույն մուկը մարդուն մեծ վնասներ ե հասց-  
նում: Յերկար ու սուր ատամներով մուկը կրծում ե  
հացահատիկ, միրդ, կահ կարասիք, հագուստեղին և այլն:



Նկ. 25. Մուկը:

Մուկը լավ լսողություն ունի. փոքրիկ, աննշան փըս-  
փացն անգամ լսում են նրա փոքրիկ ականջները:

Ամբողջ ամառվա և աշնան ընթացքում մուկը ձմեռ-  
վա համար պաշար ե պատրաստում. նա քարշ ե տալիս  
գեղի իր բունը հացահատիկ և ամեն տեսակ մթերք:

Մուկը հողի տակ մի քանի ամբարներ ե շինում,  
վորտեղ տեղափորում ե իր պաշարը: Յերբ աշունը վերջա-  
նալու վրա յելինում՝ մուկը մտնում ե իր բունն ու քուն  
մտնում. սակայն նա շուտ-շուտ արթնանում ե ու սկսում  
է կրծուել պահած քաղցր պաշարը:

Մուկը մի տարվա ընթացքում յերեսուն ձագ ե բե-  
րում, վորոնց կերակրում ե կաթով:



Նկ. 26. Տուկ մուկ:


## Մ Կ Յ Ո Ւ Խ

Սկյուռը ընակվում ե անտառում՝ ծառի վրա: Նա մեծ  
ճարպիկությամբ ցատկուում ե ճյուղից-ճյուղ. նրա մատ-  
ները յերկար են, վորոնք իրար հետ չեն միանում. նա  
ունի ուժեղ ձանկեր, վորոնցով պինդ բռնում ե ճյուղերից:

Սկյուռն իր բունը շինում ե ծառի խոռոչներում,  
կամ խոշոր ծառի ճյուղերի վրա:

Փայտի յերկար նուրբ ճյուղերից նա կլոր բուն ե  
շինում ու մեջը լցնում տերեներ ու մամուռ:

Սկյուռը սնվում ե ընկույզով, կաղինով, սունկով:  
իր յերկար մատներով ամուր բռնում ե ուտելիքը: Սկյուռը  
կրծող կենդանի յե. կրծելու ժամանակ նրան ոգնում են  
չորս յերկար և սուր ատամները: Զմեռվա համար սկյուռը  
փաղորոք սկսում ե պատրաստվել, սննդի պաշար ե հավա-



Նկ. 27. Սկյուռ:



Նկ. 28. Սկյուռի բունը:

քում: Մարմինը ծածկված է խիտ մազով, այնպես վոր ձմեռվա ցուլուը նրան վոշինչ չի կարող անել:

Սկյուռն ունի հրաշալի լսողություն:

Թշնամին նրան այնքան հեշտությամբ չի կարող իր ձանկը դցել: Սկյուռն իր ձագերին կաթով է մեծացնում:

### Վ Ո Զ Ն Ի

Վոզնին վայրի կենդանի յե:


Նա սնվում է միջատներով, խխունջներով, փորում է հողը և ուտում է մկներին:

Վոզնին հողը քանդում է սուր գնչով ու յերկար ճանկերով: Նրա մարմինը պատած է պինդ փշերով, վորոնք հողի գույն ունեն, այնպես վոր թշնամին նրան հեշտությամբ չի կարող նկատել:

Յերբ վոզնին նկատում է թշնամուն, իսկույն կծկվում է ու գունդ դառնում:

Վոզնու վոռները, կուրծքն ու վլուխը միայն պատած չեն փշերով և հենց այդ պատճառով վտանգի պահին նա բոլորովին թագցնում է իր վոտները, գլուխն ու կուրծքը փշերի տակ: Յերբ վոզնին կծկվում է, թշնամին նրան ել չի կարողանում վնաս տալ:

Վոզնին վոչնչացնում ու սպանում է նաև թունավոր ոձերին, նա ոգտակար կենդանի յե, ուստի պետք է նրան պահենք ու չվոչնչացնենք:



Նկ. 29. Վոզնի:

ՎՈԶՆԻՆ ԵԼ ՊԱՏՐԱՍՏՎԵՅ ԶՄԵՌՎԱ ՀԱՄԱՐ

I.

Դեղին տերեները ծածկել են գետինը:

Թվերի կողմն են վազում յերկու վոզնի, նրանք հաճախ կանգ են առնում, ոդ ծծում, հոտ առնում, վախենում են՝ չինի թե աղվեսի կամ շան հանդիպեն:

Հանկարծ լսվեց սայի ճռճռոցը:

Վոզնիները վախեցան. մի ակնթարթում նրանք կուչ յեկան ու ծածկվեցին փշերով:

II.

Յերբ սային անցավ, նրանք դարձյալ չեյին համարձակում տեղից շարժվել:



Նկ. 30. Վ. ո գ ն ի:

Վերջը նրանցից մեկը զգուշությամբ գլուխը դուրս հանեց փշերից ու շուրջը նայեց. յերբ համոզվեց, վոր վտանգ չկա, շարժվեց տեղից, նրան հետեւց մյուսը և այսպես յերկուսն ել շարունակեցին իրենց ճանապարհը: Վոզնիները վնասեցին խորը տեղեր, ու փոսեր փորեցին. ասպա չոր տերեների վրա սկսեցին թափալվել. տերեները կպան փշերին: Նրանք այդ տերեները բերին ու լցրին փոսերի մեջ: Այսպես նրանք պատրաստեցին ձմեռվա համար իրենց բունը:

Յերբ սառնամանիքներն սկսվեցին, վոզնիները մտան իրենց բները, փաթաթվեցին տերեների մեջ ու ձմեռվաքուն մտան:

Փ Ո Բ Զ

Պատրաստեցեք՝ բաժակ, ափսե և տաք ջուր:

Սառը բաժակը շուռ տված բոնեցեք տաք ջրի վրա: Ի՞նչ կընկատեք բաժակի մեջ:

Նման փորձ կատարեցեք նաև ափսեյով: Ի՞նչ կընկատեք տփսեյի վրա:

Հանեցեք յեղրակացություն՝ ինչի փոխվեց գոլորշին, յերբ նա սառը բաժակին կամ ափսեյին դիպավ:

ԶՈՒԲ ՅԵՎ ԳՈԼՈՐՇԻ

Յերբ ջուրը կրակի վրա տաքացնում ենք, նրա յերեսից գոլորշիներ են բարձրանում. գոլորշի յեղրակացում նաև ինքնայեռից. ուրեմն ջուրը գոլորշիանում ե:

Նման գոլորշիացում կատարվում է նաև բնության մեջ. բնության մեջ ջուրը գոլորշիանում է արեգակի ջերմությունից:

Գոլորշին թեթև է, այդ պատճառով ել նա բարձրանում է ողի մեջ:

Ինչքան ջերմությունը շատ է, այնքան գոլորշիացումը շատ է կատարվում:

Ողի մեջ միշտ գոլորշի կա:

Գիշերները, յերբ գետինը սառչում է, ողի գոլորշիները նստում են գետնի վրա ու ցրտությունից դառնում են փոքրիկ կաթիլներ. սա կոչվում է ցող:

Դ ի ս ե ց ե Բ Ինչ և լինում ցողը արկի ծագումից հետո:

ԻՆՉՊԵՍ Ե ՓԱՅԼՈՒՄ

Առավոտ ե. կանաչ խոտի ու ծառերի տեղեների վրա  
գոհարների նման փայլվում են ջրի փոքրիկ կաթիները:

Ծագեց արել, ու կաթիները զանազան գույներ  
ստացան՝ կարմիր, դեղին, կապույտ, սա առավոտվա ցողն ե:

Շուտով արել փոեց իր ջերմ ճառագայթները յերկրի  
վրա և թաց տարեներն ու խոտերը չորացըեց: Ցողը  
չքացավ:

Ինչու:

Գ Ի Տ Ե Ց Ե Ք Ց Ո Ղ Լ

Ո Ր Ա Գ Ո Վ Ջ Ջ

Ա	Ճ	Ի	Ա
Ինչպիսի գիշեր եր	Ցող կար թե վոչ		

Ծանրություն՝ կազմեցեք այսպիսի որացույց և հետեւցեք  
ցողին:

Զեր գիտողությունները մտցրեք որացույցի  
մեջ:

Յ Ե Ղ Յ Ա Մ

Աշնան վերջը, յերբ ցրտերն արդեն սկսվում են,  
ցողի տեղ դուք կընկատեք յեղյամ:

Յեղյամը սառած կաթիլ ե: Գոլորշին դեռ կաթիլ ե  
գառնում, հետո կաթիլը սառչում և գառնում է յեղյամ:

Հանձնարարություն՝ 1. Դիտեցեք, ինչ կպատահի յեղյամին, արել  
ծագելուց հետո:

2. Հավաքեցեք յեղյամ, լցրեք կաթսայի մեջ  
ու դրեք կընկին. տեսեք թե ինչ կպատահի:

Բ Ա Մ Բ Ա Կ

Զմեռվա համար մարդը տաք հագուստեղեն ե պատ-  
րաստում բամբակից:

Բամբակի սերմբ ցանում են գարնանը. բամբակի  
թուփը կոկոններ ե հանում. կոկոնները հասունանում են  
աշնանը, դրա համար ել բամբակի բերքը հավաքում են  
աշնանը:



Նկ. 31. Բամբակի ծաղկած թուփը:

Բամբակը տանում են գործարան, այնտեղ մաքրում,  
զտում են, կորիզը հանում, ապա թել են մանում, իսկ

թելերից մեքենաներով զանազան կտորեղեններ են  
գործում:


կտորեղենից կարում են խալաթ, դեյրա և այլն:  
Զեր հագուստի մեծ մասը բամբակից ե պատրաստված:

---

Ել ինչի համար ենք գործածում բամբակը:  
Դիտեցեք բամբակի թուփը:

Վ Ո Չ Խ Ա Բ

Վոչխարն ընտանի կենդանի յե, նա մնվում է խոսով.  
Դրա համար նրան խոտածարակ կենդանի յենք անվանում:  
Վոչխարը մեծ ոգուտներ ե տալիս մարդուն. նրա  
միսն ու ճարակն ուտում ենք, կաթը խմում, մածուն մա-



Ն կ. 32. Վ ո չ խ ա բ:

կարդում (մերում), կաթից պանիր ենք պատրաստում:  
Նրա բուրդը մանում ենք և նրանից գուլպաներ և հա-  
գուստեղեն գործում:

Թելը մանում են գործարաններում, գործվածքները  
նույնպես գործում են գործարաններում մեքենաների մի-  
ջոցով: Մեքենաներով կտորեղենը հեշտությամբ և շուտ  
ե գործվում, իսկ ձեռքով գործելը դժվար ե և յերկար  
ժամանակ ե պահանջվում:

---

Ել ինչի համար ենք գործածում վոչխարի  
բուրդը:  
Դիտեցեք վոչխարի կճղակը՝ կիսված ե, թե  
միացած:  
Յեզրակացությունները գրեցեք տետրի մեջ:

# ՀԱՅՈՎԱ ԲՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՄԱՐԴՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԸ



Եկ. 33. Բնաւթյունը ձմռանը:


ՀԱՅԻՎԵՑԵՔ ՅԵՎ ԳՐԵՑԵՔ ՏԵՏՐԵՐԻ ՄԵԶ

- Առաջին անգամ յերբ յեկավ ձյունը:
  - Ի՞նչ գույն ունի բնությունը:
  - Վար ձառերն են կանաչ մնացել:

ԴԻՏԵՑԵՔ ԶՅԱՆ ՓԱԹԻԼՆԵՐԸ

1. Ժողովեցեք փաթիլները ու թղթի վրա և դիմեցեք, թե ինչի յեն նման:
  2. Փաթիլները բողոքն իրար նման են, թե վոչ:
  3. Ինչով են նրանք տարբերվում իրարից:

Հանձնաւարություն՝ Սպիտակ թղթից ձևեցեք զանազան ձևի փառ  
թիվներ և կպցըք ոև թղթի վրա:



### Ել. 34. Զյան փաթիլներ:

*q w p q b g b p*

1. Զյան փաթիլները անձրկի կաթիլների պես միանգումից են թափում գետին, թե վոչ:
  2. Ուրեմն, վարն ե ավելի թեթև. անձրկի կաթիլը, թե ձյան փաթիլը:
  3. Վերցրեք հավասար մեծություն ունեցող յերկու բաժակ. մեկի մեջ լցըրեք ձյուն, մյուսի մեջ ջուր. բա-

ժակները դրեք կշեռքի նժարի վրա և տեսեք, թե նրանցից  
վորն ավելի ծանր կլինի:

Դուրս բերեք յեզրակացություն, վորն և ավելի ծանր  
— ջնուրը, թե ձյունը:

4. Մի բաժակ ձյուն հալեք, ջուրը լցրեք ելի նույն  
բաժակի մեջ և տեսեք, ջուրը տեղափորվեց բաժակի մեջ,  
թե վոչ:

Յեզրակացություն. — Վորը ավելի լայն ու մեծ տեղ  
ե բռնում, ջնուրը, թե ձյունը:

### ՀՅՈՒՆԸ ՀՈՂԻ ՀԱՄԱՐ ՎԵՐՄԱԿ Ե

Զյունը գետնի համար տաք վերմակ ե, նա սառնա-  
մանիքից պաշտպանում ե բույսի հատիկներն ու սերմերը,  
վորոնք գտնվում են հողի մեջ:

Յեթե ձյուն չինի, հողը կսառչի և սերմը կփսասի:  
Սառած ու ֆսասված սերմերն այլևս չեն ծլի:

### ՀԱՄԵՄԱՏԵՅԵՔ

Աղբյուրի ջրի մեջ դրեք ձեր ձեռները և տեսեք, ջու-  
րը գոլ ե, թե սառը:

Ջրհորից ջուր հանեցեք և տեսեք՝ ջուրը գոլ ե, թե սառը:  
Հիշեցեք, ի՞նչպես եր աղբյուրի և ջրհորի ջուրը ամառը:  
Ինչով կբացառեք այս յերկույթը:

### ԿԱՄԱՐԵԳԵՔ ՄՅԱՊԻՆԻ ՓՈՐՃԵՐ

1. Շախ մեջ լցրեք սառը ջուր, շիշը փաթաթեցեք մա-  
զուս մորթու մեջ. մի ժամից հետո տեսեք, թե ինչպիսի  
ջուր կա շախ մեջ՝ սառը, թե գոլ:

2. Լցրեք շախ մեջ տաք ջուր և այս շիշն ել փաթա-  
թեցեք մորթով. մի ժամից հետո տեսեք՝ ի՞նչպիսի ջուր  
կա շախ մեջ—գոլ, թե սառը:

Նույնանման փորճեր կատարեցեք բրդի կտորով:

3. Հանեցեք յեզրակացություն՝ Բրդեղենն ու մորթին տա-  
քացնում են ջուրը, թե վոչ:

### ԻՆՉՈՒ ՅԵՆՔ ՏԱՐ ՀԱԳՈՒՍ ՀԱԳՆՈՒՄ

Բրդեղենն ու մազուս հազուսար չեն կարող տաքաց-  
նել մարդուն. նրանք միմիայն ջերմությունը պահպանում  
են, ջերմությունը չեն բաց թողնում դուրս և հենց այդ  
պատճառով ել մենք ձմեռները հագնում ենք բրդեղեն  
հագուստ, վորպեսզի մարմնի ջերմությունը պահպանի ու  
դուրս չթողնի:

### ՀՐԳՆԱԾ ԺԱՄԱՆԱԿ ՍԱՌԸ ԶՈՒՐ ԶԽՄԵՔ

Շատ վնասակար է հոգնած ու քրտնած ժամանակ  
սառը ջուր խմելը. նման դեպքում մարդը շատ հեշտու-  
թյամբ է հիվանդանում:

Այդ պատճառով մարդը գեռ պետք է լավ հանգստա-  
նա, հովանա ու հետո ջուր խմի:

Յերեխաներից շատերը վատ սովորություն ունեն —  
կուլ են տալիս սառցի կտորներ. այս բանը շատ վնաս է  
կոկորդին:

Ընկերները փոխադարձ կերպով պետք է հետեւն  
իրար, վոր այդպիսի բաներ չկնեն և յեթե նկատեն, վոր  
ընկերներից մեկը այսպիսի անմիտ բան է անում, խրա-  
տեն նրան ու բացատրեն դրա վնասակարությունը:

## ԶՐԻ ՅԵՐԵՎԱՆԻ ՎԻՃԱԿԸ

1. Սառույցը գցեցեք ջրի մեջ և դրեք կրակի վրա.  
Տեսեցեք,թե ինչ կպատահի:
  2. Ի՞նչ յեղավ սառույցը:
  3. Սառույցից ստացված ջուրը յեռացրեք, ի՞նչ կդառնա  
այդ ջուրը:
  4. Քանի վիճակ ունի ջուրը:
  5. Թվեցեք ջրի յերեք վիճակը:

Հանձնարարություն՝ Ափսեյով սենյակ ներս բերեք ձյուն և հետևեցեք՝ ինչ կդառնա ձյունը. ափսեն ձյան ջրով դուրս տարեք սենյակից դուրս և տեսնեք՝ ի՞նչ կդառնա ջուրը:  
Յեղակացությունը գրեք տետրի մեջ:

ԴԻՏԵՑԵՔ ՍԱՐՈՒՅՅՈՒՆ

- Սառույցը վերցրեք ձեռքով և տեսեք ինչպիսի յետ:
  - Հեշտ ե թե վոչ սառույցի վրա քայլելը:
  - Ինչի՞ յե դժվար:
  - Սառույցը զցեցրեք ջրի մեջ, ինչ կպատահի նրան:
  - Հանիցիք յեզրակացություն՝ վրըն ե ավելի թեթև՝

ի գիտությունն՝ Յեթե ուզում ենք սառուցի վրա չսայթաքել,  
պիտի փոխնք սղողաթեփ, մօխիր կամ ավագ:

Հանձնարարություն՝ Զեր դպրոցի և տան առաջ շաղ տվեք մոխիր,  
ավագ կամ սողոզաթեփ:

Ինչու զաշտանիկենք սպառելուզ

Սառնամանիքի ժամանակ մարդու վոտները, ձեռներն  
ու յերեսը հաճախ սառչում են. յեթէ ուզում ենք, վոր  
այդպես չլինի, պետք է հետևյալ կերպով վարվենք: Զեռ-

Ները, վոտների ու յերեսը պետք է տրորենք յուղով. յուղը  
պաշտպանում է մարդուն սառչելուց:


Սառած տեղերը պետք ե ձյունով շփենք, մինչև վոր  
տաքամնա, իսկ ապա պետք ե յուղ քսենք:

Զեզանից մի քանիսը ձմեռ ժամանակ յերեսը տաք  
ջրով են լվանում։ Սա լավ չե։ տաք ջրով լվացած մաշկը  
ցըտից ճաքճքում ե, ուստի ձեռներն ու յերեսը պետք ե  
լվանաք սառը ջրով։

ՅԵՂԱՆԱԿԻ ՈՐԱՅՈՒՅՑ

*Z n u u q w p*

## Պալմանական նշաններ



Հանձնարարություն՝ կազմեցեք նման որացույց և լրացրեք:

Ի՞շողիս Պետք է ՆԱՅԵՔ ՊՏՂԱՏՈՒ ԾԱՌԵՐԻՆ ԶՄԵՐԸ

Զյունի ծանրության տակ ծառերի ճյուղերը հաճախ  
կոտրվում են ու թեքվում, այդ պատճառով հարկավոր ե  
ծառի ճյուղերի վրայից մաքրել ջյունը:

Այս աշխատանքների ժամանակ փոքրերը շատ բան կարող են անել և ոգնել մեծերին:

Պետք ե ծառերն ազատենք կոտրվելուց, վոր ապա-  
գայում նրանք շատ միրգ տան:

Հանձնարարություն՝ Թափեցեք ծառերի ճյուղերից ձյունը:  
Դիմեցեն թե վոր ծառի ճյուղերն են ճյունի ծանրության տակ  
ավելի շատ թերվում՝ սաղարթավոր ծառի ճյուղերը,  
թե փշատերե:



Նկ. 35.

### Ճ Ն Ճ Ղ Ո Ւ Կ

Մոխրագույն փոքրիկ ճնճղուկը շատ աշխույժ թրո-  
չուն ե: Նա ամբողջ տարի մեղ մոտ ե մնում ու մեղ հետ-  
լինում. նա մյուս թաշունների պես չի չվում դեպի տաք  
յերկրներ:

Ճնճղուկը սնվում ե միջատներով, վորդերով, հացա-  
հատիկով ու մրգով:

Մակայն ճմեռ ժամանակ նա մեծ դժվարություննե-  
րով ե կարողանում կերակուր ճարել (ինչու). նա ապրում  
ե մարդու մոտ և սնվում ե նրա սեղանի ավելցուկով:

Նա հաճախ քջջում ե դարմանն ու այնտեղ ցորենի  
հատիկներ գտնում:

Ճնճղուկն իր բունք շինում ե տան կտուրի տակ կամ  
պատերի ճեղքերում. բունն ամբողջովին ծածկում ե փա-  
փուկ փետուրներով:

Ի՞նչ ոգուտներ ե տալիս մեղ ճնճղուկը:

Հանձնարարություն՝ Զմեռ ժամանակ կերակրեց ճնճղուկին:

### ԹՌՉՈՒՆՆԵՐԻ ՍԵՂԱՆԻ

Ճմեռը ճնճղուկները մեծ դժվարություններ են քաշում:  
Աշնանը նրանք մի կերպ կարողանում են սնունդ ճարել՝  
գտնում են հացահատիկներ, ծառերի կեղևների տակ մի-  
ջատներ, վորոնք ձմեռն անցկացնելու համար պատսպար-  
վել են այնտեղ:

Բայց, ահա յեկավ ճմեռը, ճյունի տակ թաղվեց ամեն  
ինչ, ճնճղուկներն այլևս չեն կարողանում կերակուր դըտ-  
նել: Շատերը նրանցից կոտորվում են սովոր:



Նկ. 36. Թռչունների սեղանը:

Մեր պարտականությունն ե ազատել ճնճղուկներին  
սովաման լինելուց, նրանք մեր բարեկամներն են, վորոնք  
ազատում են մեր բանջարանոցները մնասատու միջա-  
ներից:

Ուրեմն կերակրենք ճնճղուկներին ճմեռը, նրանց հա-  
մար սեղան պատրաստենք ու ամեն որ փշրանքներ ածենք:

Հանձնարարություն՝ Կազմենք թռչունների սեղան:

Ագռավը գիշատիչ թռչուն է. վորս անելու ժամանակ նրան շատ են ոգնում յերկար և ուժեղ կտուցն ու սուր ձանկերը:

Նա հեռվից լավ և տեսնում իր վորսը, նրա աչքից չվ վրիպի վոչ մի արարած — վոչ մուկ և վոչ փոքրիկ ձնձղուկ:



Նկ. 37. Ագռավ:

Մմառ ժամանակ ագռավը մեծ քանակությամբ ուտելիք ունի. նա կերակրում է միջատներով, վորդերով, ձնձղուկներով ու նրանց ձվիկներով:

Իսկ ձմեռ ժամանակ նա շատ է դժվարանում կերակրու ճարելու. նա նստում է բարձր ծառի վրա ու կռավում սովոր:

Հանկարծ նրա աչքին ընկնում է սատկած անասունի դիակ: Ագռավները խումբ-խումբ հավաքվում են դիակի վրա ու անուշ անում:

Ճնձղուկներն ագռավից շատ են վախենում. հենց վոր լսում են ագռավի կռավոցը, իսկույն թագնվում են:

Շունը շատ մտերիմ բարեկամ է մարդուն, նա հըսկում է նրա բակին, վոչխարի հոտին, ոգնում է վորսի ժամանակ և այլն:



Նկ. 38. Բնտանի շուն:

Զանազան ցեղի շներ են լինում. որինակ՝ տան շուն, վորսի շուն, հովվի շուն և այլն:

Շունն իր տիրոջը հավատարիմ է մնում, հաճախ իր կյանքը զոհում է իր տիրոջն ազատելու համար: Շան հոտառությունն ու լսողությունը վերին աստիճանի զորդացած են. լավ հոտառության շնորհիվ նա կարողանում է գազանի հետքը գտնել և գողին յերեան հանել:

Շունը մնվում է մսով, հացով և շատ է սիրում վուկորներ կրծուել:


Շունը պաշտպանվում է յերկար ու սուր ատամներով: Լակոտներին նա իր կաթով և կերակրում: Լակոտները կույր են ծնվում:

Դիտեցեք շունը

1. Ի՞նչ ցեղի շներ գիտեք ելի:
2. Վ՞ր ցեղին ե պատկանում ձեր շունը:
3. Զեր շունը մեծ ե, թե փոքր. յերկամբ մազ ունի,  
թե կարճ:
4. Նա ձեզ ինչ ոգուաներ ե տալիս:
5. Ինչպիսի հոտառություն ունի. ինչ որինակներով  
կարող եք ցույց տար, վոր շունը լավ հոտառություն ունի:
6. Ինչով եք կերակրում շանը, կերակուրներից վերն  
և նրան ավելի դուր գալիս:
7. Ինչով ե տարբերվում շան թաթը կատվի թաթից:
8. Ինչով ե պաշտպանվում շունը թշնամուց:
9. Շների ի՞նչ անուններ գիտեք:


Հանձնարարություն՝ Այս հարցին գրավոր պատասխանեցեք. Հարցերը մի արտագրեք. դրեք միմիայն հարցերի համարները ու կողքին դրեք պատասխանը»

Զանազան ցեղի շներ



Հանձնարարություն՝ Կազմեցեք տարբեր շների ալբոմ, մակագրեցեք՝ վորը ի՞նչ ցեղի յէ պատկանում:

Զանազան ցեղի շներ



Կատուն

Չեզանից հւմը կատուն չի զվարձացրել ու իր ոյին-բազություններով ծիծաղ չի պատճառել. թղթի հետ նա խաղում ե, զնդակի հետ թուշկոտում, հետեւց վազ տալիս և այլն:

Կատուն մաքրասեր ե. Նա ժամանակ առ ժամանակ կարգի յե բերում իր մազերը լեղվով:

Մութ տեղեցում քայլելիս նրան շատ են ոգնում իր բեխերը. Նա բեխերի շնորհիվ մարմինը շոշափում ե ու առաջ շարժվում:

Կատուն լավ հոտառություն ունի, նրա լսողությունն  
ել շատ ե զարգացած. յերբ լսում ե մկան ծվոցը, իսկույն  
ցատկում ե ու զոհին իր ճիրանների մեջ առնում:



Ճիրանները կատվի գլխավոր զենքն են, այս ճիրան-  
ներով ե նա կովում ու սնունդ ձեռք բերում:

Կատուն այնպես ե քայլում, վոր իսկի չի լսվում,  
այդ նրանիցն ե, վոր նա վոտների մատների յետեւում  
ունի փափում բարձիկներ:


Կատուն յերեք-չորս ձագ ե բերում. ձագերը կույր  
են ծնվում, մայրը նրանց կերակրում ե իր կաթով:

Հանձնարարություն՝ Դիտեցեք կատվի թաթերը, քանի մատ ունի  
յուրաքանչյուր թաթի վրա, ինչպիսի ճիրան-  
ներ ունի:

Դիտեցեք նրա մատների բարձիկները:  
Տեսեք ինչպիսի ատամներ ունի կատուն:

## Կ ո վ

Մեր թափլա կովը յերկար ժամանակ արածում եր  
դաշտում, ապա նստեց ու սկսեց վորոճալ:



Ստամոքսից խոտը յետ ե բերում բերանը, ավելի  
լավ մանրացնում, ծամում ե ու դարձյալ կուլ տալիս:

Թափլան իր յերկար պոչով քշում ե ճանճերին ու  
մժուկներին:

Թափլան ունի յերկար ու սուր յեղջյուրներ. այս յեղ-  
ջյուրներով նա պաշտպանվում ե թշնամուց:

Հանձնարարություն՝ Դիտեցեք կովի կճղակը՝ կիսված ե նա, թե  
վոչ:

## Ի ն չ ո գ ու տներ ե տալիս կովը

Մեծ ոգուտներ ե տալիս կովը մարդուն:

Նա տալիս ե կաթ, կաթից պատրաստում ենք կարագ,  
պանիր, մածուն և այլն:

Կովը տալիս ե միս և կաջի:

Նրա կաշին գործ ենք ածում կոշիկների համար:  
Ամառ ժամանակ կովին պահում ենք գուրսը բակում, իսկ  
ձմեռ՝ տաք գոմում:

Գոմը պետք է լինի մաքուր, տաք և չոր, վորպեսզի  
կովը չհիվանդանա:

Մարդը կովի համար ձմեռվա պաշար և պատրաստում՝  
դարման, խոտ և այլն:


Կովին վորքան լավ խնամենք, այնքան ավելի շատ  
կաթ կտա մեզ:

### Խ ո գ

Մայր խոզը իր գոճիների հետ միասին բակ են դուրս  
յեկել ու ցանկապատի վրա մեջքները քորում են:

Յերկար դունչը ցցել և առաջ ու կերակուր և փընտ-  
ոռում, իր փոքրիկ աչքերով դես ու դեն և նայում, վոր վոչ  
մի բան չթողնի ու ամեն բան լափի-ուտի:

Ականջները հաճախ շարժում են ու վայնասուն բարձ-  
րացնում:



Վողնաշարի վրա յերկար ջագառ ունի բսած, վորը  
գետնին քսելով և ձան գալիս:

Կարծ պոչը աղեղի ձեւ ընդունել ու դես-դեն և  
շարժվում: Խոզն իր դունչը գործ և ածում վորպես վո-

րիչ նրա միջոցով նա վորում է հողը և ուտում վորդեր,  
բույսեր, տերեներ, մի խոսքով ուտում է ամեն ինչ:  
Նա շատ և սիրում վայրի կաղին:



Նկ. 45. Վայրի կաղին.



Դիտեցեմ՝ Խոզի վոտները, ամեն մի վոտի վրա քանի մատ ունի և  
ինչպիսի մատներ են:

### Խ ո գի ո գ տ ա կ ա ր ո ւ թ յ ո ւ ն ը

Խոզը շատ ոգուտներ և տալիս մարդուն. Նա տալիս  
և մեծ քանակությամբ միս, ճարպ, կաշի և մազ:

Խոզը շատ արագ և բաղմանում. Նա տարին յերկու  
անգամ և ծնում, ամեն ծնելիս յոթ-ութ հատ գոճի յե-  
րում:

Խոզն իր գոճիներին կերակրում ե կաթով:



Զին մարդուն շատ ովուտներ ե տալիս. Նրա միջոցով  
մարդը ճանապարհորդում ե, բեռներ ե կրում: Նրա կաշ-  
վից վունամաններ ենք պատրաստում և այլն:

Զին սիրուն կենդանի յե, մի տեսեք նրա յերկար  
մարմինը, գեղեցիկ պարանոցը՝ վրան խիս բաշը թափած:

Զին շատ լավ լսողություն և տեսողություն ունի,  
նա լսում ե ամենաչնչին ձայնն անգամ:

Քայլելիս ձին շուտ չի հոգնում, վորովհետեւ նրա  
վոտները և մանավանդ յետին վոտները շատ ուժեղ են:

Զին իր յետեկի վոտների շնորհիվ պաշտպանվում ե  
թշնամուց:

Զին կերակրվում ե խոտով, ուտում ե նաև գարի:  
Զին իր քուռակին կերակրում ե կաթով:

---

Հանձնարարյուն՝ Դիտեցեք, ձիու սմբակները բաժանված են,  
թե վոչ:

Զեր յեղբակացությունը գրեք տետրում:

---

Այս նկարի միջոցով թվեցեք, թե ինչեր են պատրաստում  
խոզի շագանից:

Ա Ն Կ Ե Տ Ա

Հնտանի կենդանիների ոգուտները

1. Վար ընտանի կենդանին և մեզ կաթ տալիս:
2. Միս,
3. Բուրդ,
4. Մազ,
5. Ճարպ:

Հանձնարարություն՝ Գրավոր պատասխանեցեք այս անկետայի հարցերին:


Վոր ընտանի կենդանին և մնալում մանակնով	Վորն և մնալում խոստաբույսերով	Վոր կենդանին և ամեն ինչ ուսում

Հանձնարարություն՝ Կազմեցեք այսպիսի անկետա և ամեն մի սյունյակի տակ գրեցեք պատասխանը:

Ի Մ Ա Յ Ե Ք



Նկ. 48. Ուժ վոտներն են:



Նկ. 49. Ուժ ականջներն են:



Նկ. 50. Ուժ պողերն են:

Հանձնարարություն՝ Գրեցեք—վար ընտանի կենդանու ձագերը կոչվում են — զառ, լակոտ, ձագ, քուռակ, մարուկ, ուլ, խոճկոր...

Կատուն մլավում և

Զին խրինջում . . . . .


Կովը . . . . .

Վոչխարը . . . . .

Շունը . . . . .

Խոզը . . . . .

Այծը . . . . .



Նկ. 51. Բնանի կենդանիներ:

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԵԾ ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ Ե ԴԱՐՁՆՈՒՄ ԱՆԱՄՆԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎՐԱ.

Բնանի կենդանիները հարկավոր են մարդու համար. մարդուն պետք են գալիս նրանց միսը, կաշին, բուրդը, կաթը և այլն. հենց այս պատճառով ել խորհրդային իշխանությունը հոգում է անասնաբուծության զարգացման ու աճման մասին:

Հիմնված են բազմաթիվ ֆերմաներ, վորտեղ անասուններին՝ պահում, նայում, խնամում են նրաշալի կերպով։ Ֆերմաների գոմերը մաքուր են, արեսու և տաք։ Հատակը տախտակից ե, վորը ամեն որ լվացվում, մաքը բում է։


Ամեն մի անասուն ունի իր առանձին մսուրը գարմանի համար։

Հիմնվել են բազմաթիվ անասնաբուծական կայաններ, վորտեղ բժշկում են ու առողջացնում հիվանդ անասուններին։

Խորհրդային իշխանությունը լույս է ընծայում բազմաթիվ գրքեր անասնապահության զարգացման վերաբերյալ։

---

Հանձնարարություն՝ եքուրուսիա կազմակերպեցեք դեպի անասնաբուծական ֆերման, տեսեք անասունների տարրեր ցեղեր։



Նկ. 52. Կովերի համար գոմ։

ՎԱՅՐԵՆԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ ՅԵՎ ԳԱԶԱՆՆԵՐ

Նապաստակ

Չյունով ծածկված դաշտի միջով արագ վազում ե  
փոքրիկ նապաստակը, ականջները խլում: Նա վախում ե  
թշնամուց:

Սաստիկ սոված ե նա. բանջարանոցում ել բան չկա  
ռւտեղու, հացահատիկի դալար ծիլերն ել ծածկվել են  
ձյունով:



Նկ. 53. Նապաստակ:

Մի քանի անգամ ձյունը յետ ե տալիս ու կրծոտում  
ե հացահատիկի ծիլերը, կամ ծառի կեղեն ե սկսում  
կրծոտել:

Նապաստակը հանկարծ նկատեց շանը, նա իր ականջ-  
ները փռեց մեջքին ու պուկ... վախափ: Շունն ել նրա  
հետեից: Նա շատ ե դժվարանում զառիվայրով վազեր  
նրա կարծ վոտները շատ են խանդարում, իսկ վարիվերով  
նա ուղղակի սլանում ե. նրա յետեի յերկար վոտներն այս  
դեպքում ազատեցին նրան: Նապաստակն ազատվեց շների  
սուր ատամներից:

Հանձնարարություն՝ Դիտեցեք նապաստակի շրթունքը, վոտները,  
ինչպես և նրա վերին շրթունքը, հետեւցեք  
նապաստակի, կամ ճագարի աչքերին, ննջելու  
ժամանակի:

Նապաստակը բազմաթիվ թշնամիներ ունի — մարդը,  
գազանները, գիշատիչ թռչունները, բոլորը սիրում են նրա  
համեղ միսը:

Մարդը փորսում ե նրան, ուտում միսը, իսկ կաշին  
ել գործ ե ածում զանազան կարիքների համար:


Նապաստակը շատ արագ ե ածում, բազմանում, տա-  
րին չորս-հինգ անգամ ծնում ե, ամեն ծնելիս չորս-հինգ  
ձագ ե բերում:

Իր ձագերին նապաստակը կերակրում ե կաթով:

Գայլ

Գայլը գիշատիչ կենդանիյե, նա մնավում ե մսեղենով,  
վորսի ժամանակ նրան շատ են ոգնում հոտառությունը,  
լսողությունն ու տեսողությունը:

Գայլը նեռվից նկատում ե վորսին, թագուն, սուս ու  
փուս մոտենում ե ու հանկարծ վրա ընկնում և վորսի վի-  
զը կտրում իր սուր ատամներով:



Յերբ վորսը կարողանում ե ազատվել ու փախչել,  
գայլը մեծ արագությամբ սկսում ե վազել վորսի հետե-  
վից. Նա լավ ե վազում, վորովհետեւ հենվում ե միմիայն  
մատների վրա:

Ճմեռ ժամանակ գայլերը դժվարանում են կերակուր ճարել, սոված գայլերի վոհմակները սկսում են շրջել դաշտերը, անտառներն ու վոռնալ: Յերբ քաղցը նրանց սաստիկ նեղում ե, նրանք նույն իսկ համարձակվում են գյուղերի վրա հարձակվել և փախցնել անասուններ:

Գայլի ճագերը կույր են ծնվում, վորոնց մայրը կերակրում ե իր կաթով:



Ա դ կ ե ս

Գաղտագողի յե՝ մոտենում աղվեսը հավաքնին: Նա շատ ե դժվարանում մնունդ ճարել ձմեռ ժամանակ: Ամառները հեշտ ե մնունդ ձեռք բերում. նա ուտում ե նապատակներ, թռչուններ, մկներ և այլն:

Գետակների մեջ վորսում ե ձկներ, խեցգետիններ ու անուշ անում: Նրան ոգնում են իր սուր ճանկերն ու կտրիչ ատամները:

Ահա հավաքնին մոտեցավ աղվեսը քանզեց պատիտակի հողն ու ներս սողաց:

Հավերից մի քանիսի վզները կորեց, իսկ մեկին առնելով բերանը, վազեց դեպի իր վորջը:

Նա իր բուճը շինել ե թփերի մեջ, վոր թշնամին հեշտությամբ չնկատի նրան:

Մարզը թշնամի յե աղվեսին, հավերի գողին:

Աղվեսի կաշին ոգտագործում ենք վերարկուների ու դիսարկների համար:

## Ա ր ջ

Զափից շատ կերակուր ունի աշնանը արջը:

Այս ժամանակ անտառը լիքն ե լինում հասունացած մրգով: Ման ե գալիս արջը անտառում, մանզալիս նա իր ամբողջ թաթն ե գնում գետնին, այդ պատճառով վազել չի կարողանում նա իր վոտներից շարժուն մատները այնպես ե ոգտագործում, ինչպես ձեռքեր: Մատների շնորհիվ նա բարձրանում ե ծառերի ու ժայռերի վրա, ուժեղ մատներով նա դիմադրում ե թշնամուն:



Արջը իր թաթի մի հարվածով թշնամուն զլորում ե գետին: Արջը գիտե նաև լավ լողար:

Շատ մնունդը նրան գիրացրել ե, սակայն ահա մուտեցավ ձմեռը, անտառում միրզը պակասեց, նա մտավ իր վորջը քաղցը մրափեց:

Մարդը վորսում ե արջին, նա ոգտագործում ե նրա միսը, ճարպն ու կաշին:

## Վ ո ր դ ա ն ը ի ն չ ո վ ե ս ո ւ մ

1. Թվեցեք վայրենի կենդանիներ . . . .

2. Նրանցից վորն ե սնվում մսով . . . .


Ճառի պաղով . . . .

Խոտաբույերով . . . .

3. Վորն ե ապրում վորջում . . . . .  
4. Սրանցից վորն ե ձմեռվա պաշար պատ-  
րաստում . . . . .

Հանձնարարություն՝ Գրավոր կերպով պատասխանեցեք այս հար-  
ցերին. հարցերը տեսրերի մեջ չարտագրեք.  
դրեք միայն հարցերի համարներ ու գրեցեք  
պատասխանները:

ՎԱՅՐԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ ԿԱՄ ԳԱԶԱՆՆԵՐ



Հանձնարարություն՝ Կատարեցեք եքսկուրսիա դեպի կենդանաբա-  
նական այգի, կամ թանգարան:  
Կազմեցեք վայրի կենդանիների ալբոմ:

### ՉՄԵՌՎԱ. ԱՄԻՍՆԵՐՆ ԵՆ

Դեկտեմբեր,  
Հունվար,  
Փետրվար:

Դեկտեմբերը տարվա վերջն ե, ձմեռվա սկիզբը:  
Հունվարը՝ նոր տարվա սկիզբն ե և ձմեռվա կեսը:

### ԳԱՐՆԱՆ ԲՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՄԱՐԴՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԸ

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆ, ԿԱՏԱՐԵՑԵՔ ԶՅՈՒՆԻ ՀԱԼՎԵԼՈՒՆ


1. Առաջին անգամ տանիքից յերբ կաթեց հալված ձյունը.
2. Տան վճր կողմը.
3. Ինչու.
4. Յերբ սկսվեց ձյունի հալոցը.
5. Ինչպիսի տեղերում ավելի շուտ հալվեց ձյունը.
6. Ինչու:

Հանձնարարություն՝ Գրավոր պատասխան տվեք յուրաքանչյուր հարցին:

### ԶՆԾԱՂԻԿՆ ԻՆՉՈՒ ՑԵ ՇՈՒՏ ԴՈՒՐՍ ԳԱԼԻՍ

Գարնան հոտը փչեց, ողը տաքացավ, ձյունն սկսեց  
հալվել, ձնծաղիկը գլուխը հանեց:

Յերեխաները դուրս յեկան դաշտը ձնծաղիկ փնտռելու:  
Ամենից շուտ Մարտն գտավ ձնծաղիկ և ուրախ-  
ուրախ բացականչեց.



Նկ. 55. Նոր գարնան նկարը:


Մենք ել գտանք, մենք ել — ամեն կողմից ձայն  
տվին մյուսները:  
Յերեխաների ուշադրությունը դրավեց ձնծաղիկի  
արմատը:

Ուսուցիչը քացատրեց, վոր արմատի մեջ հյութ ե  
լինում, վորով մնվում ե բույսը:

Նրանք մի քանի հատ ձնծաղիկ հանեցին, դրին կավե  
ամանների մեջ ու հետները բերին:

Հանձնարարություն՝ Ձնծաղիկ գտեք, հանեցեք արմատով ու  
զննեցեք:  
Ելի վոր ծաղիկներն են շուտ դուրս գալիս:

ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ԾԱՂԻԿՆԵՐ



ԳԱՐՆԱՆ ՍՎԵՏԱԲԵՐ ԾԱՂԻԿՆԵՐ

Ո Ր Ա Գ Ռ Ա Յ Ե

Ծաղկի անունը	Յերաշասաք	Պարտեղ ահ- աք	Ի՞նչ գույնի թէ	Հոտ ունի՞ թե վոչ

- Հանձնարարություն՝ 1. Այսպիսի որացույց կազմեցեք ու լրացրեք:  
 2. Կազմեցեք գարնան առաջին ծաղիկների կոլեկցիա ու յուրաքանչյուրի տակ համապատասխան անուն գրեք:  
 3. Նկարեցեք ու գունավորեցեք գարնան առաջին ծաղիկները, կազմեցեք ալբոմ:

Գ Ե Տ Ի Վ Ա Ր Ա Ր Ո Ւ Ւ Ը

Գարնանը բոլոր գետերը վարարում են: Վարարած գետը շատ մասներ կարող է պատճառել նա ափից դուրս գալով վողողում և ցանքերը, փշացնում բաղրանչարանոցները, այդին, քշում ե անասունները և այլն:

Մեր խորհրդային իշխանությունը գետի ափերը սլքնդացրեց պարիսպներ քաշելով, վորպեսզի աշխատավոր գյուղացիության հալալ վաստակը ջուրը չտանի:

Գարնանն ինչու յեն վարարում գետերը. Այս հարցին գրավոր պատասխան տվեք:

Հանձնարարություն՝ Կազմակերպեցեք եքսկուրսիա վարարած գետը դիտելու նպատակով:

Ս Ե Ր Մ Ա Զ Տ Ո Ւ Ւ Ը


Գարնան բացվելուն պես մեր գյուղի կարմիր ամբարի բակում սերմազտիչ մեքենան սկսեց աշխատել:

Մեքենան սերմը զտում է մի ակնթարթում:

Մերմացու խոշոր հատիկներն առանձին է ջոկում, միջակները՝ առանձին, անպետքն ել առանձին:

Մերմը պետք է ջոկել նրա համար, վորպեսզի ցանելու սերմի հետ խառը չլինեն անպետք, վասակար մոլախոտերի սերմերը:


Զտած սերմը շատ բերք է տալիս:




Նկար 58. Սերմազտիչ:

ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՎԱՐ ՈՒ ՑԱՆՔԸ

Գարնանը կոլտնտեսականների դաշտերում մեծ աշխատանք է յեռում:



Նկար 59. Տրակտոր:



Մերժացան:

Կոլխոզիկներն աշխատանքի յեն դուրս գալիս:  
Հողը պարարտացը ել են աշնանը, այժմ վարում են:  
Տըակտորն ահազին դաշտն արագ-արագ ակոսում եւ:  
Ուրեմն, դաշտը հերկվեց և տրակտորի փոխարեն  
սերմացան մեքենան սկսեց աշխատել:

Մեքենան շարքով ե ցանում տարբեր կուլտուրաները  
ու հետն ել փոցխում եւ:

### ԳԱՐՆԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԴԱՇՏՈՒՄ

1. Յերբ հերկվեց դաշտը.
2. Ինչով հերկեցին.
3. Ի՞նչ ցանեցին.
4. Ինչով ցանեցին.

Հանձնարարություն՝ Հարցերը փոխադրեցեք տետրերի մեջ ու պատասխաններն ել զրեցեք:


### ՑԵՐԵԿՆ ՈՒ ԳԻՇԵՐԸ ՀԱՎԱՍԱՐՎՈՒՄ ԵՆ

Գարնանը ցերեկն հետզհետեւ սկսում ե յերկարել,  
դիշերը կարճանալ:  
Մարտի 21-ին ցերեկն ու դիշերը հավասար են լինում. ցերեկն ել 12 ժամ ե, դիշերն ել:

Հանձնարարություն՝ Վերցրեք քառակուսիներով մի թերթ, հաշվեցեք 24 քառակուսի, շուրջը գծեցեք: Համրեցեք 12 քառակուսի, սատիսով սևացրեք՝ սականի գիշեր. մնացած 12-ը թողեք մաքուր, սա եւ կլինի ցերեկ, տակը մակագրեցեք՝ «ցերեկն ու դիշերը հավասար են»:

### ՏԵՂԵԿԱՆՔ

Մարտի 31-ին	ցերեկը	հավասար	և	13	Ժ.,	դիշերը՝	11	Ժ.
Ապրիլի 13-ին	»	»	»	14	»	»	10	»
Ապրիլի 27-ին	»	»	»	15	»	»	9	»
Մայիսի 11-ին	»	»	»	16	»	»	8	»
Մայիսի 29-ին	»	»	»	17	»	»	7	»



## ԴԻՄԱՎՈՐԵՑԵՔ ԹՌՉՈՒԽՆԵՐԻՆ

Գարնան ջերմությունից արթնացավ բնությունը:

Տաք յերկրներից յերգող թռչուններն յեկան. մենք  
ուրախ դիմավորեցինք նրանց. ինչու չպետք է ուրախա-  
նայինք նրանց գալով, չե՛ վոր նրանք վոչնչացնում են  
մեր բերքի թշնամի—միջատներին:

Մեր դպրոցում կազմակերպված է թռչուններին  
պաշտպանող խմբակ:

Այս խմբակը՝ բազմաթիվ պլակատներ գրեց ու փակց-  
րեց ինչպես դպրոցում, նույնպես ել գյուղում:

1. Դիմավորեցեք թռչուններին.
2. Սարյակների համար բներ շինեցեք.
3. Մի կոտորեք թռչուններին:

Հանձնարարություն՝ Անդամագրվեցեք թռչուններին պաշտպանող  
խմբակին:

## ԹՌՉՈՒԽՆԵՐԻ ՈՐ

Գարնանային առավոտ ե.

Դպրոցի բակում յերեխաներն ուրախ աղմկում են  
նրանք գնում են թռչունների համար «քաղաք» շինելու։  
Նրանցից մի քանիսը տանում են մուրճ, մի քանիսը  
պատրաստի բներ, մի քանիսն ել պլակատներ։

«Յերեխաների բանակ, սովորեցեք թռչուններին  
պաշտպանելը»։

«Թռչունները բերքի պաշտպաններն են», գրված ե  
պլակատների վրա։

Յերեխաները քաղաքից դուրս նոր շինած այգին յե-  
կան։ Ուրախ ճռվողյունով դիմավորեցին նրանց թռչուն-  
ները։

Բերած աները կախեցին ծառերից ու յերգով ուրախ  
վերադառն դպրոց։

Հանձնարարություն՝ Մասնակցեք «Թռչունների որ» կազմակեր-  
պելու գործին։



## ՍԱՐՅԱԿՆԵՐԻ

### I.

Գարնանը սարյակներն ուրախ ճռվողյունով յեկան.  
շատ հոգնած են, յերկար ճանապարհ են անցել, ահազին  
տանիջանքներ են կրել։

Գալուն պես նրանք բների հոգս քաշեցին։  
Եգ ու վորձ սարյակները սկսեցին բուն շինել։  
Առավոտից մինչև իրիկուն նրանք անդադար աշխա-  
տում են՝ բերում են խոտ, փետուր, բմբուլ, բուրդ և  
բնի մեջ դարսում։

Բունը վերջացնելուց հետո եգ սարյակը ձվեր ածեց  
ու հստեց վրան։

Նրան կերակրում եր վորձ սարյակը։

### II.

Տամնչորս որից հետո ձվերից փոքրիկ սարյակներ  
դուրս յեկան։

Սարյակների համար ամենադժվար ժամանակն ե,  
հարկավոր ե ձագերին կերակրել, շատ մնունդ ե պահանջ-  
վում, այդ պատճառով նրանք որն ի բուն կրում են, հա-

կրում՝ բղեղներ, թրթուրներ, զանազան միջատներ, ձիռներ և ուտեցնում են ձագերին. սրանով սարյակները մեծ ոգուտներ են տալիս մեր ցանքերին:

Տամներկու որից հետո եղ ու վորձ սարյակները սկսում են ձագերին թռչել սովորեցնել. սկզբում բնի չորս կողմը, ապահով տեղ փոխադրեցին, ապա հեռու տեղեր տարան և այն:

Այսպիսով փոքրիկ սարյակները սովորեցին թռչելն ու միջատներ վորսալը:

### ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆ ՍԱՐՅԱԿԻ ՎՐԱ

#### ՅԵՐԲ

1. Յեկավ սարյակը.
2. Զվեր ածեց.
3. Դուրս յեկան ձագերը.
4. Ի՞նչ եր ուտեցնում սարյակը ձագերին,
5. Սարյակը մեզ ի՞նչ ոգուտներ ե տալիս:

Հանձնարարություն՝ Գրավոր պատասխանեցեք այս հարցերին:

### Մ Ա Զ Ա Փ Ո Խ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ի Ն

Աշնանը կենդանիները ցրտից պաշտպանվելու համար խիտ մազերով ապահովվեցին, թռչուններն ել՝ բմբուլներով։ Սակայն, յեկավ գարունը:

Ողբ տաքացավ.

Կենդանիներն ու թռչուններն ազատվեցին խիտ մազերից ու բմբուլից։

Հանձնարարություն՝ Շունն ու կատուն գարնանը մազերը փոխում են, թե վո՞չ։

Դիտեցեք նաև ընտանի թռչուններին՝ ճընձուկներից բմբուլ թափվում ե, թե վո՞չ։

### ՄԻՉԱՑՆԵՐԸ ԶԱՐԹՆԵՑԻՆ

Գարնան արեգակը տաքացրեց գետինը.

Հողի ու ծառերի կեղեների տակ գտնվող միջատները զգացին տաքությունն ու դուրս յեկան։

Արեգակի ջերմությունից միջատների ձվերն ել տաքացան ու փոքրիկ միջատներ դուրս սողացին։

Գարնան հոտը ճանձն ել զգաց ու վառարանի անկունից բղզալով դուրս թռավ։

Սարդը վոստայն հյուսեց, վորս բանելու համար։

Մըջունները դուրս թափվեցին բներից ու աշխատանքի անցան։

Մեղուն տղտղալով թռավ դեսի ծաղիկները. ծծում և ծաղիկների քաղցր հյութը մեղր պատրաստելու համար։

Հարձնարարություն՝ Դիտողության տեսրում նշանակեցեք՝ առաջին անգամ վնր միջատը տեսաբ։ Վնրտեղ տեսաբ։

### Մ Ի Չ Ա Ց Ն Ե Բ



Հանձնարարություն՝ Թվեցեք, թե այսեղ ի՞նչ միջատներ են նկարած. զրեցեք յուրաքանչյուրի անունը։

Տը՝ զզ, տը՝ զզ.—տղտղաց ճանձը.

Ուրախ-ուրախ ուղղեց թէերն ու վառարանի անկյունից դուրս թռավ:



Սոված ե, կերակուր և  
փրոնում:

Շտապեց դեպի սեղանը,  
զբոսանք կատարեց, սակայն  
այնպես լավ եր մաքրած,  
վոր վոչինչ չգտավ. դուրս  
թռավ:

Պատշգամբի վրա Արե-  
վիկն ու Լուսիկը նախաճա-  
շում ելին.

— Բը՝ զզ, տը՝ զզ,—ուրախ տղտղաց ճանձը ու յերե-  
խաների մոտ վազեց. յերբեմն հացին նստեց, յերբեմն  
պանրին, յերբեմն ել նրանց այտերին:

Զայրացած յերեխաները ձեռքով քշեցին անկոչ  
հյուրին:

Ճանձը թռավ դեպի աղբանոցը.

Ո՞հ, ինչեր ասես, վոր այստեղ չլիներ. կձեպներ,  
նեխված, հօտած մուկ, մի խոսքով նրա համար սիրելի  
շատ բան կար:

Չե վոր ճանձը սիրահար ե ամեն տեսակ կեղտոտու-  
թյունների. այս կեղտոտությունը նա փոխադրում ե մեր  
կերակրի վրա ու մենք հիվանդանում ենք:

Դիսեցեն՝ ճանձը քանի վոտ ունի:

### ՊԱՅՔԱՐԵՑԵՔ ՃԱՆՁԻ ԴԵՄ

Ճանձը խիստ վխասակար միջատ ե, ուստի պետք ե  
պայքարել նրա դեմ. գեղատներում ծախվում են ճանձ  
վոչնչացնելու դեղեր:

Բացի այդ, կերակուրը ծածկված պետք ե լինի բա-  
րակ քողով: Բնակարանը, բակը պետք ե մաքուր պահենը,  
վորպեսզի ճանձը ուտելու բան չգտնի:

### ԴԻՏԵՑԵՔ—ՍԵՐՄՆ ԻՆՉՊԵՍ Ե ԾԼՈՒՄ

#### Ա. ՀԽԱՄԱԿԱՔ 1.

Վերցրեք լոբու կամ սիսեռի հատիկներ ու ածեցեք  
ջի մեջ: Ամանի մեջ թող մնա մի որ ու գիշեր:  
Դիտեցեք ի՞նչ կպատահի:  
Յերկուսի մաշկը պոկեցեք ու հետագոտեցեք, քանի  
մասից ե բաղկացած լոբու և սիսեռի հատիկը:  
Ի՞նչ ե տեղավորված այս յերկու մասի մեջտեղը:

#### Ա. ՀԽԱՄԱԿԱՔ 2.

Ցանեցեք մի ամանում լոբու և սիսեռի հատիկներ.  
Յերբեմն-յերբնմն ջրեցեք:  
Մի քանի որից հետո հատիկները հանեցեք ու դիտե-  
ցեք. ի՞նչ կը նկատեք:

#### Ա. ՀԽԱՄԱԿԱՔ 3.

Յերկու ամանի մեջ ցանեցեք լոբու հատիկներ.  
Մեկը արեգակի տակ դրեք, մյուսը՝ մութ տեղ. յեր-  
կուսն ել միաժամանակ ջրեցեք.  
Դիտեցեք, ի՞նչպես ե արեգակի տակ յեղած բույսը.  
Ի՞նչպես ե այն բույսը, վորը շվաքումն եր դրված:  
Յեզրակացություն հանեցեք, թե ի՞նչ նշանակություն  
ե ունեցել արեգակը բույսի համար:

#### Ա. ՀԽԱՄԱԿԱՔ 4.


Յերկու ամանի մեջ ցանեցեք գարու հատիկներ.  
Յերկուսն ել դրեք արեգակի տակ.  
Մեկը ջրեցեք, մյուսը՝ վոչ:

Դիսեցեն՝ Դրանցից վորն ավելի լավ ե ածում:  
Յեզրակացություն հանեցեք ել ի՞նչ ե հարկավոր բույսին:

## ԱՇԽԱՏԱՆՔ ԲԱՆՉԱՐԱՆՈՑՈՒՄ

Բանջարանոցի սարքավորում

Գարնանը բանջարանոցի հողը պետք է պարարտացնել և ապա բահել բահելուց հետո հողը հարկավոր ե մաքրել բույսերի արմատներից, ավելորդ ձներից, փափկացնել, մարգեր շինել: Մարգերի միջև պետք է փոքրիկ շավիղներ թողնել, վորպեսզի հեշտ լինի քաղանելը:



Հանձնարարություն՝ Ունեցեք դպրոցական բանջարանոց:

### Բանջար ցանել

Մարգեր շինելուց հետո, պետք է բանջարներ ցանել. ամեն մի մարգում մի տեսակ բանջարի սերմ, այն ել պետք է շարքով ցանել:

Մարգերի ծայրերին շինել բարակ տախտակներ, վրան մակագրած, թե ինչ բանջար է ցանած այս կամ այն մարգում:

Հանձնարարություն՝ Բանջարները շարքով ցանեցեք:

Դուք ել շինեցեք բարակ տախտակներ մակագրություններով:

Բանջարանոցը պետք է ժամանակին ջրել

Մենք արդեն գիտենք, վոր բույսերի աճման համար հարկավոր ե նրանց ջրել:

Ուստի, ցանելուց հետո պետք է իր ժամանակին ջրել:

Բանջարանոցը չպետք է ջրել արեգակի դուրս գալու պահին, վորովիշետև արեգակի ջերմությունից հողը շուտով չորանում է ու ճաքճքում:

Բանջարանոցը պետք է ջրել արեգակի մայր մանելուց հետո:

Հանձնարարություն՝ Զեցեք դպրոցական բանջարանոցը:

### Բաղնան

Բանջարաբույսերի հետ միասին դուրս են գալիս նաև զանազան մոլախոտեր, վրանք խանգարում են բանջարաբույսերի կանոնավոր աճմանն ու սնվելուն:

Ուստի, հարկավոր ե շուտով քաղանել, քաղանած խոտերն անմիջապես դուրս բերել, վորպեսզի միջատները մեջը բռն չդնեն:

Բացի այդ, բանջարաբույսերը մարգերի մեջ խխտ-խխտ են դուրս գալիս, սա ել լավ չի. սրանով իրար խանգարում են. հարկավոր ե անպայման նոսրացնել:

Հանձնարարություն՝ Դուք ել քաղանեցեք ձեր դպրոցի բանջարանոցը:

### ՈՐԱՅՈՒԹՅՈՒՆ

Ի՞նչ բանջարաբույս	ՅԵՐՔ ցանվեց	ՅԵՐՔ դուրս յեկագ

Հանձնարարություն՝ Կազմեցեք այսպիսի որացույց և լրացրեք:


Բանջարանոցի թշնամիներ ունի. զրանք գլխավորապես զանազան վորգերն ու ճիճուներն են:

Սրանցից մի քանիսը արմատներն են կրծում, մի քանիսը՝ տերևները:

Յեթե բանջարանոցում միջատները սաստիկ բազմացն, այդ գեպքում ամբողջ բանջարանոցը փչանում է։ Մարդը կովում է այս վնասատուների գեմ։ այս կովում մեծ ոգնություն են ցույց տալիս թռչունները, գորտերը, խլուրդը և այլն։



Թռչունները ցերեկներն ահազին քանակությամբ միշտ են վորսում, գորտերը գիշերներն են զուրս գալիս,



իսկ խլուրդն ել հողի մեջ վոչնչացնում է բազմաթիվ վնասատուներ։

Սրանք համարվում են բանջարանոցի բարեկամներ, այդ պատճառով սրանց չպետք է կոտորենք։

Հանձնարարություն Դիտեցեք, ի՞նչ ահսակ վնասատուներ եք նկատել բանջարանոցում։

Դյուզատնտեսին հարցրեք պայքարելու ձևերի մասին։



### Ա Յ Ո Ւ Մ

Այգուց յերգի ձայն ե լսվում։

Սրանք կոլխոզնիկներն են, աշխատում են՝ ետում են – ավելորդ ձղներից մաքրում, նեցուկներ տնկում։

Յերեխանները մեծերին ոգնում են՝ նրանք կտրած ձղները հավաքում են, կապում, դարսում։

Կոլխոզնիկները վաղի կտրտած ճղներն ուղարկում են գործարան, վորից թուղթ են պատրաստում:


Հանձնարարություն՝ Ոգնեցեք կոլխոզնիկներին աշխատանքի մեջ, ժողովեցեք վաղի կտրտած ավելորդ ճղները:

### ԱՇԽԱՏԱՆՔ ՊԱՐՏԵԶՈՒՄ

Գարունն ամենքին աշխատանքի հրավիրեց.

Ահավասիկ կոլխոզնիկները, վորոնք ետում են ծառերը, չորացած ճղները սղոցում, հեռացնում են:

Պարտեզի ծառերին պետք է լավ հետևել, վոր աջող բերք ստանանք. տեսեք՝ յերկու ճյուղ հյուսվել են իրար հետ, կոլխոզնիկները մեկն ու մեկը դրանցից կտրում են, վորպեսզի մյուսը կանոնավոր ու ազատ զարգանա:



Մի քանիսն ել ծառերի չոր տերեներն են պոկում, չե վոր այս տերեների մեջ են բուն դրել վնասակար մի- ջատները:

Միքանիսը գողունին կիր են քսում, վորպեսզի մի- ջատները չբարձրանան ծառը:

Բացի այդ, ծառի բնի շուրջը փոս են փորում, վոր- պեսզի մեջը մեծ քանակությամբ ջուր կանգնի:

Հանձնարարություն՝ Մեծերին ոգնեցեք աշխատելիս, պարտեզից հանեցեք կտրտած ճղներն ու չորացած տե- րեները. տերեներն այրեցեք:

### ԾԱՌԵՐԻ ԾԱՂԿԵԼՈՒ ՈՐԱՑՈՒՅՑ

Ծառերի անունները	Յերբ ուռան պտուկները	Յերբ ծաղ- կեց	Ի՞նչ գույնի ծաղկելունի	Յերբ ավար- ուղեց


Հանձնարարություն՝ Կաղմեցեք այսպիսի որացույց և ձեր դիտո- ղությունները ծառերի ծաղկելու վերաբերյալ մտցրեք մեջը:

### Ծ Ի Ծ Ե Ռ Ն Ա Կ

Ողը լցվեց ծիծեռնակների ճկճկոցով, նրանք գտան նախկին բունն ու սկսեցին վերանորոգել այն, մի քանիսն ել հին բունն ավերված գտան. եղ ու վորձ ծիծեռնակ- ներն սկսեցին նորը կառուցելու մասին հոգալ. կտուցով բերում եյին կավ, իրենց մածուցիկ թքի հետ շաղախում ու բնի ամուր պատերը շարում. ապա մեջը փոռում են չոր խոռ, բմբուլ, վորպեսզի փափուկ լինի:

Ծիծեռնակները սրնթաց ճախրում են ողի մեջ ու հետո ել բազմաթիվ միջատներ վորսում:

Եղ ծիծեռնակը բնի մեջ 3—4 ձու և դնում ու վրան  
սպառում. յերբ ձագերը դուրս յեկան՝ եղ ու վորձ ծիծեռ-  
նակներն ամբողջ որը կերակրում ելին նրանց միջամներով:  
Զագերը խիստ շատակեր են:



### ԴԻՏԵՑԵՔ ԾԻԾԵՌՆԱԿԻՆ

Ն շ ա ն ա կ ե ց ե ք

1. ՅԵՐԲ յեկան ծիծեռնակները . . . . .
2. Բունն ինչից շինեցին . . . . .
3. Ծիծեռնակը յերբ զրեց ձվերը . . . . .
4. Զագեր յերբ հանեցին . . . . .
5. Ծիծեռնակն ինչով ե կերակրում իր ձագերին
6. Քանի՞ որից հետո թևավորվեցին . . . . .
7. Ծիծեռնակն ինչ ոգուաներ ե տալիս . . . . .

Հանձնարարություն՝ Գրավու պատասխաններ տվեք այս հարցե-  
րին. հարցերը մի արտագրի, արտագրեցեք  
միայն նոմերն ու կողքին պատասխանեցեք:

ՎՈՐ ԹՈՉՈՒՆԸ ՎՈՐԾԵՂ Ե ԲՈՒՆ ԾԻԾԵՌ


Սարյակը	·	·	·	·
Ծիծեռնակը	·	·	·	·
Ճնճղուկը	·	·	·	·
Ագռավը	·	·	·	·

Գիտենալու նպատակով՝ ծառին, կտուրի տակ, պատշգամբի առաս-  
տաղի տակ և այլն:

ԴԻՏԵՑԵՔ ՈՒ ԳՐԵՑԵՔ

Յեկավ՝ թոշելով.	·
» սողալով	·

» . . . . .  
Ճանձ, արջ, մրջուն, վոզնի, մուկ, սարյակ, ծիծեռնակ:  
Հանձնարարություն՝ Այս բառերը համապատասխան հարցերի դի-  
մաց գրեցեք:



ՄԵՐ ԸՆՏԱՆԻ ԹՈՉՈՒՆՆԵՐԸ


Աքաղաղ	Հավ	Հնդուհավ
Ետպ	Բաղ	

Հանձնարարություն՝ Գրեցեք, վոր ընտանի թռչունն ե կչկչում,  
կանչում, կվկվում, դու—անում և այլն:

## ՄԵՐ ՀՆՏԱՆԻ ԹՌՉՈՒԿՆԵՐԸ

— Զուշու, զուշու, զուշու.—լսվեց առավոտ կանուխ մի ձայն.

Ձայնը լսելուն պես բակի ամեն կողմից աղմուկաղաղակով դուրս թափվեցին հավեր, սագեր, ճնդուհավեր, բաղեր, մեկը մյուսից առաջ ե անցնում, իրար կտցահարում. ամենից շատ աքաղաղն ե փքում, համարձակքայլում, սրան-նրան փախցնում:



Ամենքը կշացան ու դես-դեն ցրվեցին՝ փոքրիկ աքը լորները ցանկապատի վրա թռան, թևերը թափահարելով բարձրածայն «ծուղրուղու» կանչեցին: Սագերն ու բագերն որորվելով ուղևորվեցին գետի կողմը. հենց մտան թե չե, նրանց նավածե թեթև մարմինը ջրի յերեսին սկսեց լող տալ: Նրանք սկսեցին թաղանթներով միացած վոտներով թիավարել ու հետն ել լայն կտուցները շուտ շուտ կոխել ջրի մեջ, այստեղ վորս գտնելու համար:

Հնդուհավերը սկզբում սկսեցին բակում վոլոր-մոլոր թրկ գալ, ապա բակից դուրս գալով անցան դաշտն ու այնտեղ խոռ արածել սկսեցին:


Հավերն ել ցրվեցին բակում և սկսեցին քջուջ անելով վնասուել միջատներ, ճիճուներ ու սեղանից թափած փշրանքներ:

Դիսեցե՞ ինչու համար ենք ուզում բմբուլը:  
Հավի ու սագի վոտը. բնչ տարբերություն կազմանց միջև:  
Համետատեցե՞ Հավի ու սագի բմբուլը, բնչ տեսակ ե:  
Յեզրակացորդուն հանեցե՞ ինչու սագը ջրում չի թրջվում:  
Դրեցե՞ ինչ ենք ուտեցնում ընտանի թոչուններին:

## ԻՆՉ ՈԳՈՒՑՆԵՐ ԵՆ ՏԱԼԻՄ ՀՆՏԱՆԻ ԹՌՉՈՒԿՆԵՐԸ


Մեծ ոգուտներ են տալիս նրանք. նրանցից ստանում ենք ձու, միս, բմբուլ, ձարպ:

Այդ ե պատճառը, վոր մարդը նրանց բազմացնում—խնամում է:



Գյուղում մի ընտանիք չեք գտնի, վոր ընտանի թրուչուններ չունենա:

Խորհրդային իշխանությունը շատ տեղերում հիմնեց ընտանի թուչունների ֆերմաներ:



Այս Փերմաներում պահում են զանազան ցեղի հավեր; Հնագույնի թռչունները բազմանում են ձվերի միջոցով. թիսկան հավի, սագի, կամ հնդուհավի տակ դարսում են ձվեր, ու ձագեր են դուրս գալիս. հավը քսանմեկ որումն ե ճուտեր հանում, իսկ բաղը, սագը և հնդուհավը՝ մի ամսում:

Հնտանի թոշուններ բազմացնում են նաև ինկուբատորի միջոցով. ինկուբատորը մեքենայե, վորի դարակներում մի քանի հարյուր ձույենք դնում, ապա տաքացնում ենք ու ձագեր հանում:

Հանձնարարություն՝ Եքսկուրսիա կատարեցեք զեպի թռչնաբուծական ֆերմա. ծանոթացեք ցեղական հավերի տիսակների հետ. զննեցեք ինկուբատորը:

ԹՈՒԽԱՐ ՆԱՏԵՑՐԵՔ ՈՒ ԿԱՏԱՐԵՑԵՔ ՀԵՏՎՅԱԼ ԴԻՏՈ-  
ՂՈՒԹՅՈՒՆԸ

1. ՅԵՐԲ ՆԱՍՏԵցրիք թուխսը ձվերի վրա.
  2. Քանի՞ ձու դրիք.
  3. ՅԵՐԲ դուրս յեկան ձուտեղը.
  4. Քանիսը.
  5. Ձուտերին ի՞նչ եք ուտեցնում.
  6. Ի՞նչ եք ուտեցնում հավին:

Համեմարտություն՝ Կազմեցեք թիսկանին դիտելու որացուց.  
հարցերն արտազրեցեք ու պատասխանները  
զբեք կողքին:

ԳԱՐԱՆԱՅԻՆ ՊՏՈՒՂՆԵՐԻ ՈՐԱՅՈՒՅՑ

Պաղի անունը	Յերբ հա- սունացավ	Պաղի գումը	Համել

Հանձնարարություն՝ կազմեցեք այսպիսի որացույց և լրացրեք:

ԳԱՐԵՎԱՆ ԱՄԻՍՆԵՐՆ ԵՆ

*U* *w* *p* *w*,  
*U*. *w* *p* *b* *L*,  
*U* *w* *J* *b* *w*:

# ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՄԱՌՎԱ ԲՆՈՒ- ԹՅԱՆ, ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎՐԱ ՅԵՎ ԱՄԱՌՎ- ՅԻՆ ՀԱՆՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դ Ի Տ Ե Ց Ե Ք

1. Ամառը յերկինքը գլխավորապես ի՞նչ գույնի յե-  
մնում:
2. Ի՞նչ գույնի յե խոտը:
3. Ի՞նչ գույնի յեն ծառերը:

Հանձնարարություն՝ Արտագրեցեք հարցերը տեսրերում և յուրա-  
քանչյուրի տակը պատասխան գրեցեք:  
Նկարեցեք՝ ամառվա յերկինքը, խոտը, ծառերը.

## ԱՄԱՌՎԱ ՅԵՂԱՆԱԿԻ ՈՐԱՅՈՒՅՑ

Ա մ ի ս

Արեսուս որ	Ամպամած	Քամոս	Անձրեսոս	Վորոտ ու կայծակ	Կարկուտ

Հանձնարարություն՝ Կազմեցեք նման որացույց և լրացրեք:

Կատարեցեք դիտողություն վորոտի ու  
կայծակի վրա


1. Վորոտ ու կայծակի ժամանակ ի՞նչ տեսակ է լի-  
նում ամպը.

2. Ի՞նչով է տարրերվում անձրևաբեր ամպերից:
3. Յերկնքի վրա ի՞նչպես է շարժվում՝ դանդաղ, թե  
արագ:
4. Ի՞նչ տեսակ է լինում բնությունը վորոտ ու  
կայծակից առաջ:
5. Վորոտ է առաջ լինում՝ փայլակը, թե վորոտը:
6. Դիտեցեք՝ վորոտ ու կայծակից առաջ թռչուններն  
ի՞նչ գրության մեջ են լինում:

Հանձնարարություն՝ Պատասխանեցեք այս հարցերին: Հարցերը  
մի արտագրեք, արտագրեցեք միայն նոմերը  
և կողքին պատասխանը գրեցեք:  
Նկարեցեք և գունավորեցեք վորոտ ու կայծակի ամպը:

## ԱՄԱՌՎԱ ԱՄԻՍՆԵՐԸ

Հունիս, Հուլիս, Ոգոստոս.



Ա մ ա ռ ա յ ի ն ա շ շ ա -  
տ ա ն ք ի ծ ր ա գ ի ր

1. Ամառվա ամիսներն ոգ-  
տագործեցեք կազմուրվելու նպա-  
տակով. մեծ մասամբ յեղեք մա-  
քուր ողում:

Ուտելուց առաջ որական մի  
անգամ լողացեք, իհարկե կանխո-  
րոք բժշկի թույլտվությունը վերց-  
նելուց հետո:

Շուտ պառկեցեք և վաղ վեր  
կացեք. վորոշակի ժամերին կերեք:

2. Դիտողություն կատարե-  
ցեք բնության և ամառային գործ-  
աշխատանքի վրա:

3. Կազմեցեք յեղանակի, ծաղիկների ու դաշտային աշխատանքների որացույց:

4. Գրեցեք տետրում ինչ ձեմ ոգնություն ցույց տը-վիք կոլսողներին դաշտային և բանջարանոցային աշխա-տանքներում:

### Դիտողություն կատարեցեք հացահատիկների վրա

Ի՞նչ հացահատիկ	Յերբ հնձե- ցին և ինչով	Յերբ կալսե- ցին և ինչով	Վարտեղ պահեցին

Հանձնարարություն՝ Ժողովեցեք արտերում բսած մոլախոտերը, իմացեք դրանց անունները, չորացրեք բույ-սերը, կպցրեք սովարաթղթին և յուրաքան-չյուրի տակ համապատասխան անուն գրեցեք:

Գրեցեք՝ ինչ թուշուն նկատեցիք արտում:

### Դաշտում

Ի՞նչը հարեցին . . . . . ի՞նչով . . . . .  
Ի՞նչը հնձեցին . . . . . ի՞նչով . . . . .

Հանձնարարություն՝ Միտքը լրացրեք գրավոր կերպով:

Ի՞նչով են տարբեր վում իրարեց

Յորենն ու գարին . . .  
Կորեկն ու վարսակը . . .  
Գարին ու կորեկը . . .  
Սիմինդըն ու ցորենը . . .

Հանձնարարություն՝  
Այս հարցերին տվիքը բանա-  
վոր պատասխան:




Հացահատիկներ:



Ժողովեցեք՝ Այս հատիկները կպցրեք սովարաթղթին, տակը հա-  
մապատասխան անունները գրեցեք ու կախեք պատից: Պլակատ-  
ների վրա գրեցեք՝ «Հացահատիկների սերմերը»:

Ահա ինչն ե մանգաղին փոխարինում



Հնձող մեքենան աշխատում ե՝

արագ,

հեշտ,

մաքուր.

շատ հատիկ ե ստացվում.

շատ դարման ե մնում:

Ինչը վոր մանգաղը մի որում կը ինե, մեքենայով  
այդքան գործը մի ժամում կվերջանա:

Մեքենայով մարդը ժամանակ ե շահում:

Դիտողություն կատարեցեք ամառը  
բանջարանոցի վրա

Ի՞նչ բանջարա- պտուղ ստացեց	Ցերք ստացվեց

1. Գրեցե՛ Ամառվա ընթացքում բանջարանոցում ինչ աշխատանքներ անցկացրին:

2. Կազմեցե՛ Ամառային բանջարապտուղների ալբոմ. մեջը  
նկարեցեք պտուղն ու գունավորեցեք, տակը համապատասխան անունը գրեցեք:

3. Գրեցե՛ ինչ թշնամի ու բարեկամներ տեսաք բանջարանոցում:

4. Նկարեցե՛ Դիտողության տեսքում, ըստաստուների միջոցով ֆոտոված տերմիները:

## ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆ ՊԱՐՏԵԶԻ ՎՐԱ

Վարպետություն հասավ	Ցերք հասավ

Հանձնարարություն՝ Այս որացույցը նկարեցեք ձեր դիտողության  
տեսքում և ձեր դիտողություններն ել գրեցեք մեջը:

Գրեցե՛ նոլիողն ամառն ինչ աշխատանքներ կատարեց:  
Նկարեցե՛ Ամառվա պտուղը. կազմեցեք ալբոմ. պտուղները գունավորեցեք ու անունները գրեցեք տակը:

Դիտողություն կատարեցեք անտառաբուժության վրա

Գրեցե՛ որացույցում՝ ինչ տեսակ ծառեր, թփեր, ծաղիկներ, կեր և պտուղներ կան ձեր անտառում:

Ծառեր	Թփեր	Ծաղիկներ	Կեր	Պտուղ

Գիտեցեմ՝ ի՞նչ տեսակ ծառեր կան ձեր անտառում։

Չորացրեք ծառերի տերևները, ստվարաթղթին  
կպցրեք ու տակը համապատասխան անունը գրեցեք։

Կազմեցեք անտառային ծաղիկների կոլեկցիա,  
նկարեցեք անտառապատուղներ, սունկեր և գունավորեցեք։

ԳՐԱԿՈՐ ՊԱՏԱՍԽԱՆ ՏՎԵՔ ՀԵՏԵՎՅԱԼ ՀԱՐՑԵՐԻՆ,

1. Ի՞նչ կենդանիներ տեսաք ձեր գյուղի մոտի անտառում։

2. Ի՞նչ թռչուններ։

3. Ի՞նչ միջատներ նկատեցիք։

### ԱՄԱՌԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՈՐԱՑՈՒՅՑ

Վ. Բ. Թ. Ե. Դ.	Ի՞նչ աշխատանք կատարեցին	Ի՞նչ գործիքով	Ի՞նչ մասնակցություն ցույց տվի այս աշխատանքին

Հանձնարարություն՝ Նկարեցեք տերում նման որացույց և լրացրեք։

Նկարեցեք տերում նման որացույց և լրացրեք։

Նկարեցեք տերում նման որացույց և լրացրեք։

### Մ Ո Ղ Ե Մ

Մողեսը շատ ե սիրում արև, նա ձգվում է տաք ավագի կամ քարերի վրա ու տաքանում եւ։

Մողեսը կերակրվում է վորդերով ու ճիճուներով։ Նա վոչնչացնում է բերքի թշնամիներին։

Գարնանը նա ձվեր է ածում մամուռի մեջ. ձուն կճեպ չունի, շրջապատված է ամուր մաշկով։ Եղ մողեսն ամենկին հոգս չի տանում իր ձագերի մասին. ձագերը, դուրս գալով, իրենք են իրենց համար կերակուր ճարում ու թշնամիներից պաշտպանվում։

Նրանք բազմաթիվ թշնամիներ ունեն, սրանք են՝ ոձերն ու թռչունները։



Մողեսը մարդուն ոգուտ ե տալիս, թե վասար կ ի ս ե ց ե ՞ Մողեսը քանի՞ մատ ունի։  
Ճանկեր ունի, թե վոչ։  
Ի՞նչ տեսակ մաշկ ունի։

### Մ Ո Ղ Ո Ւ Ն Ն Ե Ր

Մողեսն ու գորտը չորս-չորս վոտ ունեն, ոձն ամենակին վոտներ չունի, ման գալիս նա սոզում է փորի վրա։ Նրա մաշկը սառն է ու լպրծուն. բերանը լայն է բացվում։



Կերակուրը կուլ ե տալիս առանց ծամելու:  
Կրիան ել սողուն ե:

Հանձնարուրուն՝ Հետաքրքրվեցեք—կրիայի մարմինն ի՞նչով ե  
ծածկված:  
Քանի՞ վոտ ունի:  
Վոտների վրա ճանկեր ունի՞, թե վոչ:  
Ի՞նչպես ե քայլում:  
Թշնամուց պաշտպանվելու համար ի՞նչ մի-  
ջոցների յե դիմում:  
Զեր դիտողությունները գրեցեք դիտողության տետրում:



ԱՅՍՊԻՍԻ ՀԱՍՏՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ ՏԱՐԵՔ  
ԳՅՈՒՂՈՒՄ

Ամառը ճանձերը շատ են բազմանում, սրանք մեծ  
վնասներ են հասցնում մարդուն՝ տարածում են հիվան-  
դություններ. հարկավոր ե դրանց դեմ ուժեղ պայքար  
մղել սրա համար պետք ե խիստ մաքրություն պահպանել:

1. Բակն ու շրջակայքն ամեն որ ավլեցեք:
2. Լվացքի ջուրը բակում, տնից մոտիկ շմափեք:
3. Կերակուրը ծածկեցեք:
4. Ուտելուց հետո սեղանը լավ մաքրեցեք, սենյակն  
ել ավլեցեք:
5. Կեղառտ ամաններն իսկույն հավաքեցեք ու լվացեք:
6. Դեղատնից ձեռք բերեք ճանճորս թղթեր:
- Կազմեցեք պլակատներ ճանճի վնասակարության մա-  
սին ու գյուղում, աչքի ընկնող տեղերում, կպցրեք: Կազ-  
մակերպեցեք ճանճերի դեմ պայքար մղող խմբակ: Աշխա-  
տեցեք վորքան հնարավոր ե շատ ընկերներ ներգրավել  
խմբակում:

### ԱՅՍ ԱՆԿԵՏԱՑԻ ՀԱՐՑԵՐԻՆ ԳՐԱՎՈՐ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ ՏՎԵՔ

1. Տարին քանի՞ ամիս ունի.
2. Քանի՞ յեղանակ.
3. Թվեցեք տարվա յեղանակները.
4. Տարվա յուրաքանչյուր յեղանակի մեջ քանի՞  
ամիս կա.
5. Վ՞եր ամսով ե սկսվում տարին.
6. Վ՞եր ամսով վերջանում.
7. Վ՞եր ամսից սկսեցինք ուսումը.
8. Վ՞եր ամսով վերջացավ ուսումնական տարին.
9. Տարվա վոր յեղանակին, վորտեղ և ի՞նչ աշխա-  
տանք անցկացրիք:



8 Ա Ն Կ

	ՑԷՐԿԱ
1. Պողապահություն . . . . .	3
2. Բնությունն աշնանը և մարդու աշխատանքը , . . . .	19
3. Հմեռվա բնությունն ու մարդու աշխատանքը . . . .	57
4. Գարնան բնությունն ու մարդու աշխատանքը . . . .	83
5. Դիտողություններ ամառվա բնության, աշխատանքի վրա և ամառային հանձնարարություններ . . . . .	108





---

శ. బుట్టార్పి, క. బుట్టార్పి

## పున్నమిత్రాలు ఎదులు

సామాజిక విభాగ I జపానీస్ తరఫిలు

బెంగాలు—1932

---